Անգամ Ֆիրդուսի թաղամասի ավարտական տեսքը դեռեւս չկա, բայց ամենասկզբում հենց Ֆիրդուսից են սկսել, մարդկանց ստիպում էին վաճառել տները, մարդիկ դժգոհ էին փոխհատուցումներից եւ այլն: Ինչ վերաբերում է Կոնդին, ապա շատ լավ կլիներ, եթե կարողանային Կոնդն ավելի հրապուրիչ դարձնել, նաեւ տուրիստների համար գրավիչ:

Կարդացեք՝ էջ 4



Այնուամենայնիվ, ինչը ստիպեց իշխող խմբակին՝ քվեարկության ավարտից 5-6 ժամ անց՝ մեռելային դեմքերով հանդես գալ: Եթե հաղթանակի մասին «ավետելն» էր ՀՀ քաղաքացիներին, ապա դա պետք է արվեր ուրախ դեմքով: Եթե մեռելային էին դեմքերը, պետք է ենթադրել, որ գործերը շատ վատ էին... ինչ հիմքով էին հաղթանակն ավետում:

Կարդացեք՝ էջ 5



Թե բա՝ պարոն Հովակիմյան, ճիրբ եք իմացել, որ խնդրահարույց տեղամասերը ժամանակին չեն փակվել: Սա հիրց է, որ տալիս եք պարոն Հովակիմյանին... Նա էլ, թե՝ 8-ին պակաս էր... Մութուլուս էր, լավ չեմ հիշում: Հարցնում են՝ մամուլից ու Ֆեյսբուքից եք իմացել: Չէ: Հեռազգացողությունն է հուշել... Չէ... բա ոնց եք իմացել:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 106 (4241), 30 հունիս, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

ՊԲ նախկին հրամանատար, 5.5 տարով դատապարտված Զալալ Հարությունյանը, որը պատիժը կրում է «Վարդաշեն» ՔԿՀ-ում, արդեն քանի օր է՝ Տելեգրամում «օնլայն» է: Նա 44-օրյա պատերազմի գործով է դատվել՝ «զինվորական պաշտոնեական անփութության» համար, որն «անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ» հոդվածով: Պատիժը կրում է 25-ի աշնանից: ՔԿՀ աղբյուրի փոխանցմամբ՝ պրոբացիոն ծառայությունը վերանայել է նրա պահման պայմանները՝ բաց ռեժիմ է, ինչը նշանակում է բանտից դուրս գալ, աշխատել եւ այլն: Մեզ ասացին՝ իշխանությունը սպասում էր ընտրություններին, որ փոխեին Զալալի ռեժիմը, հաջորդ քայլով պայմանական վաղաժամկետով ազատելու են՝ պատժի կրման մեկ երրորդը լրանալու հիմքով: Ասում են՝ Հարությունյանն իրեն ճիշտ է պահել՝ ցուցմունքներում Փաշինյանին «մաքրել» է պատերազմի պարտության մեղքից: Նա մտերիմներին անգամ բողոքել է, թե չի հասկանում՝ ինչու այդքանից հետո իրեն նստեցրին: Փաստն այն է, որ նրա նկատմամբ ավելի բարյացակամ են, քան, ասենք, Միքայել Արզումանյանի, որը պատերազմի վերջին օրերին է պաշտոն զբաղեցրել, բայց երկար նստեց եւ քանի ամիս է՝ տնային կալանք է կրում: Փորձեցինք Զալալ Հարությունյանի ռեժիմի փոփոխության մասին ՔԿԾ հանրային կապերի բաժնից կամ փաստաբանից պարզաբանում ստանալ, սակայն մեր զանգերն անպատասխան մնացին:

Նոր ձեւավորվող ԱԺ անդրանիկ նիստին մոտ 1 ամիս կա, սակայն ընդդիմադիր դաշինքները դեռ կանգնած են դժվարին որոշման առաջ՝ վերցնե՞լ, թե՞ չվերցնել մանդատները: 2 ուժերին բոլոր կողմերից հորդորում են չվերցնել մանդատները, իշխանությանը թողնել միայնակ՝ համոզված, որ ամիսներ անց ստիպված կլինեն արտահերթ ընտրությունների գնալ: Սակայն ունենալով արտաքին աջակցություն, ինչո՞ւ պիտի Փաշինյանը գնա դրան, եթե կարող է միայնակ կառավարել, եւ դա ճգնաժամի չի հանգեցնում: «Ուժեղներն» անցած շաբաթ քննարկում արեցին՝ պարզելու, թե ժողովուրդն ինչ է ուզում: Քոչարյանի թիմը լռում է՝ էստաֆետը թողել են թիվ 1 ընդդիմությանը: Կարապետյանի թիմից ասացին, որ ընտրություններից հետո իրենք կողմ են եղել մանդատներից հրաժարվելուն, սակայն հետո սկսել են մտածել՝ ինչ է տալու բոյկոտը, եթե դրա այլընտրանքը փողոցային պայքարն է, որն այս պահին չունի պոտենցիալ, քանի որ ժողովուրդն էներգիան ընտրություններում սպառել է, իսկ Փաշինյանին գահընկեց անելու համար մանդատներ են պետք: Քննարկումները շարունակվում են: ՍԴ վճռից հետո ընդդիմությունը կհայտնի մանդատները վերցնել-չվերցնելու որոշման մասին:

Մանր ժուլիկներ

Ամոթի քողը իշխանականները վաղուց դեն են նետել: Ո՛չ քաղաքական ռեպրեսիաներն են փորձում թաքցնել օրենքների ու օրինականության տակ: Ո՛չ բացահայտ ընտրակաշառքն ու ընտրողների նկատմամբ ճնշումներն են փորձում քողարկել եւ հավասար մրցակցության պատրանք ստեղծել: Օրը ցերեկով Կենտրոնական ընտրական կոչվող հանձնաժողովը մի ողջ կուսակցության դուրս է թողնում խորհրդարանից եւ ապօրինի որոշում կայացնում՝ 60 հազար ընտրողի քվեն նվիրելով իշխող կուսակցությանը: Սահմանադրական կոչվող իբր բարձր դատարանն օրը ցերեկով քննություն է իրականացնում՝ դույզն-ինչ ջանք չգործադրելով՝ օրինականության, անաչառության տպավորություն թողնելու ՀՀ քաղաքացիների վրա: ՍԴ դատավորները ՔՊ-ի կարկառուն անդամներին վայել հարցեր են ուղղում դիմողներին, իսկ արդարադատության նախարարը հենց սահմանադրականի դահլիճում՝ նիստի ժամանակ, ծամոն է ծամում: Երեկ մի արտասովոր լկտիության մասին էլ լուր ստացանք: Հիշում եք, չէ՞, որ ապրիլի 1-ից այս իշխանությունը հայտարարեց թոշակները 10 հազար դրամով բարձրացնելու մասին: Ծափ, ծիծաղ, համազգային մեծ ոգեւորություն հաջորդեցին դրան՝ 600 հազար պապիկ-տատիկների մեծ մասը վազելով գնաց Նիկոլին ընտրելու: Ուրեմն այդ խավից մի մեծ հատված, թոշակից զատ, նաեւ անապահովության նպաստ է ստացել: Այդ նպաստն ու թոշակը հնարավորություն կտային քիչ թե շատ բարեկեցիկ ապրելու: Պարզվում է՝ մեծ մասի նպաստը հունիսից կտրել են: Իբրեւ թե այդ 10 հազարը, նաեւ 10 հազար հետվճարը նրանց դուրս են թողել նպաստառուների ցանկից: Թվում է՝ նորմալ է, դե, եթե սահմանագծին են եղել, եւ միավորները չեն բավարարում, պետք է դուրս մնային: Բայց այս մանր ժուլիկները նպաստի գումարները ապրիլ-մայիսին վճարել են, հունիսից են կտրել, որ տարեցների քվեները չկորցնեն:

Չնայած Նիկոլ Փաշինյանն անցած շաբաթ ճեպազրույցում հայտարարեց, որ կառավարությունում փոփոխություններ չի նախատեսում, սակայն մարզպետների կազմում սպասվում են: Խոսում են, որ մարզպետի պաշտոնին հրաժեշտ կտան Արմավիրի եւ Կոտայքի մարզպետներ Վահրամ Խաչատրյանն ու Ահարոն Սահակյանը. նրանք գործադիրից օրենսդիր կտեղափոխվեն՝ պատգամավորի կարգավիճակում: Ամիսներ անց էլ Լոռու մարզպետի հաստիքը թափուր կդառնա, քանի որ Արեն Մկրտչյանին դիտարկում են Վանաձորի ՔՊ թեկնածու: Խոսակցություններ կան նաեւ, որ հնարավոր է Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանին էլ նորից խորհրդարան վերադարձնեն: Մինչեւ 2028 թվականը մարզպետների ինստիտուտը վերանալու է:

ԿԴԱՌՆԱ՞ ՎԱՆԱՁՈՐԸ ԳՅՈՒՄՐԻ-2

ՔՊ-ն պատրաստվում է Վանաձորի ընտրություններին: Նախորդը 2021-ի դեկտեմբերի 5-ին էր, ըստ ամենայնի՝ 26-ինն էլ կլինի դեկտեմբերին: Իշխանության թեկնածուն Լոռվա մարզպետ Արեն Մկրտչյանն է, որը դուրս է գրվել Ալավերդու հաշվառումից եւ գրանցվել Վանաձորում՝ հորեղբորորդու տանը, որ օրենքով պահանջվող 6 ամսվա բնակության ցենզին համապատասխանի: Չնայած անցած ընտրություններից հետո ՔՊ-ն Արկադի Փելեշյանի՝ Ակայի միջոցով ուզուրպացրեց Վանաձորը, հաղթած թեկնածու Մամիկոն Ասլանյանին կալանավորելով, սակայն մեր աղբյուրներն ասում են, որ իշխանությունը քաղաքապետին յուրային չի համարում, հատկապես իր հովանավոր՝ ԱԱԾ նախկին տնօրեն Արմեն Աբազյանի պաշտոնանկությունից հետո Ակայի դիրքերը թուլացել են: Լուրեր կան, որ իրավապահները սկսել են նրանով հետաքրքրվել եւ քաղաքապետարանում գնումների, տենդերների հետ կապված ինչ-որ խախտումներ են հայտնաբերել: Հունիսի 7-ից առաջ Վանաձորի նախընտրական «կուրացիան» ՔՊ-ն նրան չի վստահել: Ական էլ, ասում են, աշխատել է «Ուժեղ Հայաստանի» համար: Սակայն քանի որ ՔՊ-ի դիրքերը շատ խարխուլ են Վանաձորում, չի բացառվում, որ Ակային առաջիկա ընտրություններում կրկին կօգտագործեն՝ նրան որպես երկրորդ ուժ առաջադրելով՝ ընդդիմությունից ձայներ խլելու, իսկ ընտրություններից հետո ՔՊ-ի հետ կոալիցիա կազմելու համար: Առայժմ այլ թեկնածուների մասին չի խոսվում, հնարավոր է, որ առաջադրվի նաեւ Մամիկոն Ասլանյանը, որն «Ուժեղ Հայաստանի» ցուցակով պատգամավոր է ընտրվել: Մեր աղբյուրների պնդմամբ, Ասլանյանի գործոնով է պայմանավորված, որ ՔՊ-ն Վանաձորը խոշորացնելու ծրագիր է իրականացնում՝ Փամբակը միացնելով Վանաձորին, հույսով, որ Փամբակի գյուղերում Ասլանյանը ձայն չունի, իսկ իրենք վարչական ռեսուրսով կհաղթեն, ինչպես արեցին Էջմիածինը Խոյին միացնելով:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՍԴ-ՈՒՄ ԵՐԿՈՒ ԲԱՐՁՐԱԿԱՐԳ ԴԱՏԱՎՈՐ ԿԱ

Սահմանադրական դատարանը հունիսի 26-ին սկսեց հունիսի 7-ի ընտրությունների արդյունքների վիճարկման գործով նիստը՝ ըստ 7 քաղաքական ուժերի դիմումների: Վերջին օրերին դատավարության կողմերին հարցեր են ուղղում ՍԴ դատավորները: Դատավոր Սեդա Սաֆարյանն ընդդիմադիր ուժերի ներկայացուցչից հետաքրքրվեց. «Ես կխնդրեի, որ «Ուժեղ Հայաստանը» եւ «Հայաստան» դաշինքը անդրադառնան

այս հարցին եւ նաեւ այն հայտարարություններին, որ մենք գնում ենք Ուկրաինայի ճանապարհով: Այս միտքն ինչպիսի՞ ազդեցություն կարող էր թողնել կամ ազդեցություն կարո՞ղ էր թողնել Հայաստանի ընտրողի վրա, թե՞ ոչ»:

«Ուժեղ Հայաստան»-ի ներկայացուցիչ, փաստաբան Արամ Վարդեւանյանը, մոտենալով ամբիոնին, պարզաբանում խնդրեց. «Սա քաղաքակա՞ն բնույթի հարցադրում է, թե՞ իրավական»: Պարզվեց՝ ոչ միայն հայտնի կողմնորոշմամբ Սեդա Սաֆարյանն է քաղաքական վերլուծությունների ու գնահատականների հակված, չնայած գործը քննվում է բարձր դատարանում, այլ նաեւ դատարանի նախագահ Արման Դիլանյանը, որն ընդհատեց Վարդեւանյանին, թե. «Ընտրական վեճերով, ես կարծում եմ՝ բոլորդ էլ կհամաձայնեք ինձ հետ, որ հնարավոր չէ այդպես շատ հստակ տարանջատել վեճի քաղաքական եւ իրավական կողմը: Հիմա դուք պատասխանեք դատավոր Սաֆարյանի հարցին, եթե ունեք պատասխան»: Վարդեւանյանը նշեց, որ ՍԴ ներկայացրած դիմումի շրջանակներում վկայակոչել են ԱՄՆ նախագահի կողմից արված հայտարարությունը, Ֆրանսիայի նախագահի կողմից արված հայտարարությունը, ԱՄՆ փոխնախագահի, ԱՄՆ պետքարտուղարի կողմից արված հայտարարությունները, որոնք ուղիղ հասցեական ուղղված են եղել Նիկոլ Փաշինյանին աջակցելուն:

«Սա արդյո՞ք մենք գնահատում ենք արտաքին ազդեցության տեսանկյունից ուղիղ միջամտություն. միանշանակ՝ այո՛: Ավելին, մենք նաեւ հաշվետվություն ենք ներկայացրել սոցիոլոգիական հետազոտության, թե ինչ ազդեցություն է նշվածն ունեցել: Այն, որ նման հարցադրում հնչում է ոչ թե դիմումի շրջանակներում, այլ որոշակի առումով հակափաստարկման կամ հակառակ համեմատականի, կանխակալության կամ անաչառության մտահոգություն առաջացնում է»,- ասաց Վարդեւանյանը: Սեդա Սաֆարյանն արձագանքեց. «Ձեր՝ բոլորիդ դիմումներում գրեթե գործոնների մեջ թվարկված է արեւմտյան պաշտոնյաների ուղիղ ազդեցությունը ընտրությունների արդյունքների վրա տեսանկյունից, որ հայտարարություններ են արվել ի պաշտպանություն իշխանության եւ այլն, եւ այլն: Այս կարգի հանգամանքներ նշվել են: Ես հիմա հարցնում եմ՝ այդ գործոնները, որոնք, ըստ ձեզ, ազդող են եղել ընտրողի կամ կարող են նաեւ ազդող լինել, այն պայմաններում, երբ Ռուսաստանի Դաշնության նախագահը եւ այլ պաշտոնյաներ, այդ թվում՝ արտաքին գործերի նախարարությունը, պարբերաբար ՀՀ իշխանության դեմ հակաքարոզչություն, իսկ մյուս քաղաքական ուժերի դեմ պաշտպանություն են իրականացրել: Ավելին ասեմ, դրան էլ հաջորդել են նաեւ որոշակի գործողություններ՝ Լարսում գործարարներին զրկելու եւ...»: Դատավորի խոսքն այնքան էլ գրագետ չէր, բայց հասկանալի էր, որ Սաֆարյանը փաշինյանական իշխանության թեզերն է վերաշարադրում: Նրա խոսքին միջամտեց ԲՀԿ ներկայացուցիչ Արամ Օրբելյանը. «Բարձր դատարա՛ն, քաղաքական հայտարարություն է կատարվում ամբիոնից, որը՝ որպես հաստատված փաստ... խնդրում եմ դադարեցնենք դա»: Դիլանյանն Օրբելյանին նկատողություն հայտարարեց՝ առանց դատարանի թույլտվության ամբիոնին մոտենալու եւ հայտարարություն անելու համար: Սովորաբար դատարանները քննության ընթացքում փորձում են իրենց դիրքորոշումը թաքցնել, հանդես գալ որպես անաչառ ու օբյեկտիվ արբիտր, բայց փաշինյանական իշխանությունն այնպես է հնազանդեցրել դատական համակարգը, որ բարձր ատյանի՝ Սահմանադրական դատարանի դատավորներն իրենց նեղություն չեն տալիս՝ գոնե առերեւույթ օբյեկտիվ լինել:

ՍԴ քննության մասին «Հրապարակը» զրուցել է նախկին դատավոր **Ալեքսեյ Սուքոյանի** հետ:

- ՍԴ նիստին իր խիստ կանխակալ, սուբյեկտիվ, պրոիշխանական վերաբերմունքով, հակառուսական գնահատականներով եւ ընդդիմությանն ուղղված քննադատական հարցադրումներով աչքի ընկավ դատավոր Սեդա Սաֆարյանը, որի մասնակցությանը նախապես դեմ էր ընդդիմությունը, բայց նրան բացարկ հայտնելու միջնորդությունը մերժվեց: ՍԴ դատավորն ունի՞ իրավունք՝ նիստը քաղաքական բանավեճի վերածելու:

- Սեդա Սաֆարյանից նման հայտարարություններ լսելը զարմանալի չէ, ես նրանից ուրիշ բան չէի էլ ակնկալում: Նա ժամանակին Արման Բաբաջանյանի կուսակցության ցուցակում էր, հետեւաբար՝ իր մոտեցումները շատ մոտ են իշխանության մոտեցումներին: Նա քաղաքականացրեց նիստը, եւ պատահական չէ, որ Սեդա Սաֆարյանի անկողմնակալության վերաբերյալ կասկածներ էին հնչում: Ինչ վերաբերում է նրա այն դիտարկումներին, թե իբրեւ ռուսական կողմն աջակցել է ընդդիմությանը, ապա ՌԴ նախագահն ընդամենը հայտարարել էր, որ ճիշտ կլինի՝ Հայաստանում ընտրություններին մասնակցեն նաեւ ընդդիմադիր ուժերը:

- ՍԴ նախագահը նույնպես օբյեկտիվ չէ, նա, փոխանակ դատավորին քաղաքական բնույթի հայտարարություններ անելու համար դիտողություն աներ, Արամ Օրբելյանին նկատողություն տվեց:

- Իմ գնահատմամբ, այնտեղ կա երկու բարձրակարգ դատավոր, որոնց ես ճանաչում եմ՝ Արման Դիլանյան, Երվանդ Խունդկարյան: Մնացածի որակներին ծանոթ չենք, մեկը ՀԿ ներկայացուցիչ է եղել, մյուսը՝ փաստաբան, մեկը դասախոս է եղել: Պրոֆեսիոնալ երկու դատավոր կա այնտեղ:

- ՍԴ նիստերին հետեւելով՝ ի՞նչ եք կարծում, նման դատավորներ ունեցող դատարանը կարո՞ղ է արդար վճիռներ կայացնել:

- Ընթանում է դատական գործընթացը: Այս փուլում կարծիք հայտնելը պրոֆեսիոնալ չէ: Սպասենք դատաքննության ավարտին: Այնուամենայնիվ, դիմողներին ներկայացնում են բարձրակարգ փաստաբաններ եւ փայլուն կատարում են իրենց գործառույթները:

ԷՋԸ՝
ՀԱՅԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԸ ՏԵՂ ՉՈՒՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ, ԹՈՂԵՔ ԱՅԴ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ



«Հրապարակի» զրուցակիցը գյուղատնտեսության նախկին փոխնախարար **Աշոտ Հարությունյանն** է:

- Գյուղացիները ծանր կացության մեջ են հայտնվել, ապրանքն իրացնելու խնդիր ունեն, Ռուսաստանը հայկական գյուղմթերքը չի ընդունում, ինչի արդյունքում գյուղատնտեսությամբ զբաղվողները, այդ թվում՝ ծաղիկ, ձուկ, ելակ, ծիրան, այլ պտուղներ աճեցնողները չգիտեն ինչ անել: Իշխանությունները հայտարարում են, որ ՌԴ-ի այլընտրանքը եվրոպական շուկան է, նշում են, որ արդեն իսկ որոշ ապրանքներ արտահանել են Եվրոպա, իսկ թե Եվրոպայում ինչ ճակատագրի է արժանանում հայկական ապրանքը, այդ մասին իշխանավորները չեն խոսում, սակայն կան տեղեկություններ, որ, օրինակ, հայկական ծաղիկը Եվրոպայում չեն գնում: Որոշ տեղեկություններ կան, որ ապրանքը հասցրել են Եվրոպա ու ստիպված են եղել ոչնչացնել, անգամ արտահանող ընկերությանը պարտավորեցրել են վճարել դրա ոչնչացման համար: Ինչ եք կարծում՝ այս պայմաններում հնարավո՞ր է ռուսական շուկան փոխարինել եվրոպականով:

- Հնարավոր չէ ռուսական շուկան փոխարինել այլ շուկայով, ինչո՞ւ, որովհետեւ ՀՀ-ից դուրս եկած գյուղմթերքը կամ այլ ապրանքներ հիմնականում սպառում է Ռուսաստանը: Ճիշտ է, ունենում ենք լոգիստիկ խնդիրներ՝ կապված Լարսի հետ, սակայն Լարսի թունելը կարող է խնդիրը լուծել: Ռուսական շուկան մեզ համար մեծ առավելություն ունի, ինչո՞ւ, որովհետեւ Հայաստանը ԵԱՏՄ անդամ պետություն է: Դա նշանակում է, որ Հայաստանից դուրս եկած ապրանքներն առանց մաքսատուրքերի՝ պարզեցված ձեւով ՌԴ են մտնում, եւ հակառակը՝ այնտեղից են ապրանքներ բերում Հայաստան: Այս ամենը ոչ միայն հրապուրիչ է, այլեւ՝ ձեռնտու մեզ համար: Այժմ հայտնվել ենք մի իրավիճակում, որ ով ասես, վերլուծում է այս հարցը, հատկապես Եվրոպական Միության երկրներ գյուղմթերք արտահանելու մասին են շատ խոսում: Այսօր շուկան տեղ է տալիս այն ապրանքներին, որոնք տեսքով, համային առումով, փաթեթավորմամբ եւ գնով բարձր դիրքերում են: Այն հեքիաթները, որ մերն ուրիշ է, մերը լավն է, վաղուց էլ չեն աշխատում: Այն տեղեկությունները, որ հայկական ապրանքները գնում են ԵՄ, զուտ քաղաքական հռետորաբանության տրամաբանության մեջ են, դրանք ուղղակի քաղաքական հայտարարություններ են, ոչ ավելի: Տարիներ են հարկավոր, որպեսզի հայկական գյուղատնտեսությունը զարգանա, այնքան զարգանա, որ կարողանա դառնալ մրցունակ եւ պահանջված եվրոպական շուկայում: Այժմ ինչ-որ մարդիկ են վերլուծում այս հարցերը, ովքեր ո՛չ գյուղատնտեսական գիտելիքներ ունեն, ո՛չ փորձ ունեն, ո՛չ աշխատել են ոլորտում, ո՛չ էլ անգամ համապատասխան կրթություն ունեն: Ինչ-որ տերմինոլոգիաներից են խոսում, եւ դա մարդկանց, հասարակությանը շփոթմունքի մեջ է գցում: Հայկական ապրանքն իր արժեքով, ինքնարժեքով տեղ չունի եվրոպական շուկայում, թողեք այդ հեքիաթները:

- Բայց Ռուսաստանն էլ չի ցանկանում հայկական ապրանքը գնել: Նիկոլ Փաշինյանի վարած հակառուսական քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ ռուսական կողմը Հայաստանի դեմ սկսել է սանկցիաներ կիրառել: Ի՞նչ անել, որպեսզի խնդիրը լուծում ստանա, եւ հայ գյուղացին չտուժի:

- Իսկ իշխանությունն ի՞նչ էր սպասում: Ութ տարի է՝ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը մեր տնտեսությունը քայքայում է, կործանում է՝ տարբեր կողմերից, հիմա էլ հերթը Հայաստանը սանկցիաների տակ մտցնելն է: Միլիարդավոր դրամներ են տվել ֆերմերներին, այգի ունեցողներին՝ խոստանալով լուսավոր ապագա, բայց մենք բազմիցս նշել ենք, որ չի կարելի այդքան գումարներ տրամադրել, կան որոշակի ռիսկեր, եւ այդ ռիսկերի ի հայտ գալու դեպքում չկան հակադարձող քայլեր: Իշխանությունն ունի կործանարար վարք, եւ դա Փաշինյանի վարած արտաքին քաղաքականության արդյունքն է: Մյուս կողմից էլ, ազգաբնակչությունը մտածում է, որ եթե ապրանքը չի վաճառվում, ապա գնանկում պետք է լինի, սակայն մենք այսօր հակառակն ենք տեսնում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՃԱՆԱՊԱՐՀ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԻՍԻԱՆ-ՄԵՂՐԻ ՀԱՏՎԱԾԸ ՊԵՏՔ Է ԿԱՌՈՒՑՎԻ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ

Քաջարանի թունելի շինարարության մեկնարկը տրվեց շուքով, գունավոր փոշի-սրտիկներով ու մեծ քարոզչական աղմուկով: Տարածքային կառավարման նախարար Դավիթ Խուդաթյանը Իրանի փոխնախագահ Համիդ Փուրմոհամադիի, Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի, պատգամավորների հետ մեկնել էր Քաջարան՝ մասնակցելու միջոցառմանը:

Քաջարանի 7,2 կիլոմետրանոց թունելի կառուցմամբ, որը Հյուսիս-Հարավ մայրուղու մասն է կազմելու, ներկայում գործող երթուղին կկրճատվի մոտ 14 կիլոմետրով, դրանով հնարավոր կլինի երթեւեկել արդեն ոչ թե 50 կմ/ժամ միջին արագությամբ, այլ 80 եւ 40 րոպեով կկրճատվի երթեւեկության ժամանակը, կշրջանցվի Մեղրու լեռնանցքը, որով ձմռանն անցնելը վտանգավոր է:

Քաջարանի թունելի կառուցումն իրականացվելու է Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի հատկացրած 200 միլիոն ԱՄՆ դոլար վարկային միջոցներով եւ շուրջ 195 միլիոն ԱՄՆ դոլար Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորմամբ: Նշվում է, որ աշխատանքները տեւելու են 6 տարի, այսինքն՝ թունելը պատրաստ կլինի, լավագույն դեպքում՝ 2032 թվականին: Անշուշտ, լավ ծրագիր է, եւ միայն ուրախանալ կարելի է: Սակայն սահմանված ժամկետներից ուշացումների, ծրագրի բարձր արժեքի, Հյուսիս-Հարավ մայրուղու ընդհանուր դանդաղ ընթացքի մասին պաշտոնական լրահոսը լռում է:

Բացի դա, 2022-ին իրանական կողմը հայտարարում էր, որ թունելի շինարարությունը պետք է սկսվեր 2023-ի գարնանը, սակայն մրցութային եւ նախագծային քաշքշուկների պատճառով այն հետաձգվեց 3 տարով:

Դեռեւս կառավարության 2021-2026թթ. հնգամյա ծրագրով նախատեսված էր Սիսիան-Քաջարան եւ Քաջարան-Ագարակ ճանապարհահատվածների աշխատանքները, ներառյալ Քաջարանի թունելն ամբողջությամբ, ավարտել մինչեւ 2026 թվականը: Սակայն, ինչպես տեսանք, պաշտոնական մեկնարկը տրվեց միայն հիմա:

Թերեւս, այս ծրագրի ամենամեծ թերությունն այն է, որ ռազմավարական նշանակություն ունեցող մայրուղին կառուցվում է առանձին, իրարից կտրված հատվածներով: Օրինակ՝ Քաջարանի թունելի մեկնարկը տրվել է, սակայն դրան նախորդած բարդագույն Սիսիան-Քաջարան (60 կմ) հատվածի շինարարությունը դեռեւս չի սկսվել: Հայտնի է, որ արդյունավետ եւ անվտանգ ճանապարհ ունենալու համար Սիսիան-Մեղրի հատվածը պետք է կառուցվի ամբողջությամբ: Կառավարությունը Սիսիան-Քաջարան ճանապարհի համար մի քանի տենդեր է հայտարարել: Այդ տենդերներին մասնակցել են չինական կազմակերպություններ, որոնք հաղթելու մեծ շանս ունեն, սակայն հայտերի ուսումնասիրությունը ձգձգվում է: Չինացիները, որոնք թունելաշինության ահռելի փորձ ունեն ու բազալտը փորելու առաջատար տեխնոլոգիաների են տիրապետում, երեւի աշխարհում լավագույնն են այս գործում: Նրանք թունելի 1 կիլոմետրը կառուցում են 31 մլն դոլարով: Այլ կերպ ասած՝ 7,2 կմ թունելը նրանք կկառուցեին ոչ թե 400 մլն դոլարով, այլ կրկնակի էժան՝ մոտ 200 մլն-ով եւ շատ ավելի արագ, քան նախատեսված է ներկայիս պայմանագրով:

Տպավորությունն այնպիսին է, թե Արեւմուտքը չի ուզում, որ այս ճանապարհն ամբողջությամբ կառուցվի: Որովհետեւ այն բարելավում է ճանապարհը դեպի Իրան եւ դեմ է ԹՐԻՓՓ-ին: Հնարավոր է՝ ասում են փորձագետները: Այնուհանդերձ, ունենք փաստ, որ ամբողջական ճանապարհի կառուցումը ձգձգվում է, եւ միայն Քաջարանի թունելի մեկնարկն է տրվել, ընդ որում՝ ոչ թե եվրոպական, այլ Ասիական բանկի փողերով, որի խոշոր ֆինանսավորողներից է Ռուսաստանը:

Արդյո՞ք այն, որ Սիսիանում ճանապարհները հատվածաբար են կառուցվում, չի նվազեցնում թունելի անմիջական արդյունավետությունը: Քանի դեռ պատրաստ չեն հարակից բոլոր բարդ լեռնային հատվածները, միայն Քաջարանի թունելը չի լուծում փոխադրումների արագության եւ անվտանգության հարցը:

«Հրապարակի» հարցին պատասխանելով, «Հյուսիս-Հարավ» ծրագրի իրականացման գրասենյակի առաջին ղեկավար **Ֆելիքս Փիրումյանը** նշեց, որ թռուցիկ տեղեկություն ունի, սակայն կարող է ասել, որ եթե այդ թունելը սարքվի, դրանով կարելի կլինի գնալ Կապան, Քաջարան, Մեղրի: «Հյուսիս-Հարավի Երեւան-Գյումրի հատվածը, օրինակ, հիմա պատրաստ է: Թեեւ ամբողջ Հյուսիս-Հարավը դեռ պատրաստ չէ, բայց Երեւանից Գյումրի կարելի է գնալ նորմալ ճանապարհով եւ Գյումրիից գալ Երեւան: Նույնն էլ սա է»,- ասում է նա: 6 տարին, ըստ նրա, 7,2 կմ թունել սարքելու համար երկար ժամանակ չէ: «Որպեսզի դուք պատկերացնեք, օրինակ. Իջեւան-Հրազդան երկաթգծով Մեղրաձորի թունելը 71 թվին սկսել են կառուցել, 87 թվականին ավարտվել է: Իսկ դրա երկարությունը 8,3 կմ էր, ընդամենը 1 կմ երկար: Բայց եթե հաշվի առնենք, որ այսօր տեխնիկան եւ տեխնոլոգիան զարգացել են, ես համարում եմ, որ 6 տարին հիմնավորված ժամկետ է»: 400 մլն դոլարն էլ, ըստ նրա, բարձր գին չէ, քանի որ թունելները հիմնականում հարուստ երկրների համար են. «Կառավարությունը չի կարող միանգամից այդքան գումար ունենալ ու ասել՝ ես բյուջեից դնում եմ, կառուցում եմ, իրատեսական չէ: Պարզ է, որ պետք է վարկ վերցնի, 10-20 տարի այդ վարկը սպասարկեն, եւ դրա շնորհիվ ունենանք այդ թունելը: Ավելին ասեմ՝ հարուստ երկրները եւս վարկավորման միջոցով են կառուցում»:

Թունելի կառուցման ազդեցությունը մեծ է լինելու Սյունիքի էկոհամակարգի վրա, այդ վնասները կփոխհատուցվե՞ն բնությանը, ինչ եք կարծում՝ հետաքրքրվեցինք Ֆելիքս Փիրումյանից: «Թունելի դեպքում վնաս չկա: Տեսեք՝ Իտալիայում բնությունը, եթե հյուսիսից իջնում ես դեպի կենտրոն, մոտավորապես նույնն է, բայց գիտե՞ք այնտեղ ոնց են կառուցվում թունելները: Թունելից դուրս ես գալիս կամրջի վրա, կամրջից մտնում ես թունել: Եվ գիտե՞ք, թե ինչու. որպեսզի բնությունը չփչացնեն, ոչ թե անեն հողային պաստառներ՝ 20-40 մետր բարձրության վրա, ծառեր կտրեն: Հակառակը՝ որքան ավելի շատ են օգտագործվում թունելներ եւ կամուրջներ, այնքանով այդ ճանապարհը քիչ է ազդում միջավայրի, բնության վրա: Մնացած դեպքերում, եթե անում են հսկայական հողային պաստառներ, պարզ է, որ բնությունը փչանում է: Այս դեպքում հենց այդպես են անելու: Պատկերացրեք, այդ թունելի փոխարեն, եթե սերպանտին ճանապարհներ կառուցեին, մի սար կոչնչացնեին»,- պատասխանում է Ֆելիքս Փիրումյանը:

ՀԳ. *Քաջարանի թունելի 1-2 կիլոմետրը փորվել է դեռեւս մութ ու ցուրտ տարիներին: Աշխատանքները դադարեցվել են Հրանտ Բագրատյանի պաշտոնաթողությունից հետո: Իհարկե, սա կարեւոր ճանապարհ է՝ այն իմաստով, որ ձմռանը մեքենաները չեն կանգնի Մեղրիի լեռնանցքում, բայց կա այնտեղ Հալիձորի՝ Տաթեւի ձորի հատվածը, որտեղ գործում է ճոպանուղին, որը բեռնափոխադրողները չէին կարողանում հաղթահարել: Այդ հատվածում նախատեսվում է օդային կամուրջ, եւ եւս մեկ թունել պետք է լինի՝ 8,6 կմ երկարությամբ Բարգուշատի թունելը, որը լինելու է Հայաստանի ամենաերկար ստորգետնյա ճանապարհը եւ որը «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի (Տրանշ-4) Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի առանցքային եւ ամենաբարդ ենթակառուցվածքն է: Այն զգալիորեն կրճատելու եւ անվտանգ դարձնելու Սյունիքի մարզի երթեւեկությունը: Առանց այս հատվածների Սիսիան-Մեղրի ճանապարհը լիարժեք գործել չի կարող:*

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՔՊ-Ի ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ. ԱՊՐԻԼԻՑ ԹՈՇԱԿԸ ԲԱՐՁՐԱՑՐԻՆ, ՀՈՒՆԻՍԻՑ ՆՊԱՍՏԸ ԿՏՐԵՑԻՆ

Ստեր տեղեկություններով՝ հարյուրավոր ընտանիքներ զրկվել են հունիսի նպաստից: Մենք ահազանգեր ենք ստացել Գեղարքունիքի մարզում բնակվող նպաստառու ընտանիքներից, հատկապես՝ թոշակառուներից, որոնք մեզ պատմեցին, որ իրենց սոցիալական նպաստն այս ամսվանից կտրել են:

Երբ դիմել են Միասնական սոցիալական ծառայության տարածքային տվյալ կենտրոն, իրենց պատասխանել են. քանի որ թոշակը բարձրացել է 10 հազար դրամով, ուստի նրանց անապահովության միավորն իջել է, այդ իսկ պատճառով նպաստից զրկվել են:

Տեղեկացանք, որ միայն Գավառ համայնքում 200-ից ավելի ընտանիք զրկվել է հունիսի նպաստից: Միասնական սոցիալական ծառայության Գավառի տարածքային կենտրոնի տնօրեն **Նաիրա Խանդանյանը** մեզ հետ զրույցում հստակ թիվ չնշեց, թե քանի նպաստառու է զրկվել նպաստից, միայն ասաց պատճառը, թե ինչու են զրկվել. «Հիմնականում տարեցներն են, որոնց թոշակը բարձրացել է 10 հազար դրամով, ունեն 10 հազար դրամի հետվճար եւ օգտվում են բժշկական առողջապահության ապահովագրության ծառայություններից»:

Թե քանի նպաստառու ընտանիք է զրկվել հունիսի նպաստից, հարց ուղղեցինք Միասնական սոցիալական ծառայության Մարտունու տարածքային կենտրոնի տնօրեն Զոհրաբ Շահինյանին, սակայն նա չպատասխանեց մեր հարցերին, խորհուրդ տվեց դիմել ՄՍԾ:

«Հայաստանում նոր ներդրված համակարգում միջին նպաստի չափը 85 հազար եւ ավել դրամ է: Ունենք ընտանիք, որ 280 հազար դրամ նպաստ է ստանում, գնահատվել է, որ այդ մարդն իսկապես ծայրահեղ վիճակում է գտնվում: Այս նոր համակարգի իմաստն այն է, որ մենք թիրախավորված նպաստ տալիս ենք այն մարդկանց, որին համակարգն է ընտրում՝ մի քանի տասնյակ գործոն հաշվի առնելով: Այն մարդկանց, ովքեր որ ունեն դրա կարիքը: Մարդու եկամուտը բարձրանում է, նա մեխանիկորեն դուրս է մնում համակարգից: Եթե մարդը գտնում է, որ սխալ է տեղի ունեցել՝ անսահմանափակ բողոքարկելու հնարավորություն կա»,- մեզ հետ զրույցում ասաց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի մամուլի քարտուղար **Նվեր Կոստանյանը**:

Թոշակառուներին նաեւ հուզում է այն հարցը, որ երբ ապրիլի 1-ից թոշակը բարձրացրին, ինչո՞ւ, օրինակ, հենց նույն ամսվա կամ մայիսի նպաստը չկտրեցին: Ստացվում է, որ իշխանությունը նախընտրական փուլում խաբել է մարդկանց՝ եւ նպաստն է տվել, եւ բարձրացած թոշակը, իսկ հունիսից կտրել է նպաստը: Եվ դա արել է, որ ՔՊ-ն ձայներ ստանա նպաստառուներից: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունն է լավ հաշվարկ կատարել: Քանի որ թոշակները 10 հազար դրամով բարձրացնելուց հետո, սոցիալական համակարգով միավորի իջեցում էր նախատեսվում, ըստ որի՝ հարյուրավոր ընտանիքներ պետք է զրկվեին թոշակից, ուստի թոշակները որոշել են բարձրացնել ապրիլի 1-ից, բայց նպաստներն իջեցնել հունիսից: Ի դեպ, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը հուլիսի 1-ից ընտանիքների անապահովության գնահատման այս նոր համակարգը ներդնելու է հանրապետության ողջ տարածքում: Նոր համակարգով նպաստից զրկվելու են նաեւ անժառանգ թոշակառուները: Ինչպես ասում են՝ ընտրություններից հետո՝ թեկուզ ջրհեղեղ:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿՈՆԴ

ՆՈՒՅՆԻՍԿ ՖԻՐԴՈՒՍԻ ԹԱՂԱՄԱՍԸ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԱՎԱՐՏԵԼ, ԿՈՆԴԻ ՀԱՐՑԸ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԲԱՐԴ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն օրերս այցելել էր Կոնդ թաղամաս, հանդիպել բնակիչների հետ, տեղում ծանոթացել Կոնդի վերակառուցման նախագծին ու առաջարկվող լուծումներին: Նրան ուղեկցել էին Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Եղիազար Վարդանյանը: Փաշինյանը շրջայց էր կատարել թաղամասում, ծանոթացել պատմամշակութային նշանակություն ունեցող կառույցների վիճակին, զրուցել բնակիչների հետ:

Կոնդ թաղամասի քաղաքաշինական վերակառուցման մասին շատ վաղուցվանից են խոսում: Այս իշխանությունը, որը սիրում է մեգանախագծերի մասին ամպագոռգոռ հայտարարություններ անել՝ Աջափնյակի մետրո, ակադեմիական քաղաք, Կոնդի վերակառուցման հետ կապված հայեցակարգ է մշակել, որը քննարկվել է վարչապետի գլխավորությամբ՝ հունիսի 26-ին: Նախանշվել է, որ թաղամասի վերակառուցման ելակետային պայմաններն են, մասնավորապես՝ պատմամշակութային ժառանգության եւ հուշարձանների պահպանումը, բնակչության կենսապայմանների բարելավումը, ինժեներական եւ տրանսպորտային ենթակառուցվածքների արդիականացումը, տնտեսապես իրագործելի զարգացման մոդելի ձեւավորումը, ներդրումային գրավչության բարձրացումը, զբոսաշրջային ակտիվության խթանումը:

Կոնդ թաղամասի ընդհանուր տարածքը կազմում է 16.0 հա, որից նախագծային միջամտության տարածքը՝ 10.0 հա: Թաղամասում առկա են ՀՀ պետական ցուցակում ընդգրկված 4 հանրապետական նշանակության հուշարձան եւ 8 նորահայտ հուշարձան՝ հիմնականում բնակելի տներ, որոնք ունեն տեղական նշանակության հուշարձանի կարգավիճակ: Կոնդի զարգացման համար առաջարկվում է պետություն-մասնավոր ներդրող-համայնք համագործակցության մոդելը: Հայեցակարգի մշակման ընթացքում ուսումնասիրվել է միջազգային փորձը, մասնավորապես՝ Աթենքի «Պլակա» պատմական թաղամասի օրինակը, որը հիմնված է պատմական միջավայրի պահպանության, հետիոտնային տարածքների բարելավման, փոքր բիզնեսի խթանման եւ մշակութային կյանքի ակտիվացման համադրման վրա:

Բնակիչների հետ զրույցում Փաշինյանը ներկայացրել է հայեցակարգի մանրամասները եւ տեղեկացրել, որ նախատեսվում է Կոնդի մասին օրենքի ընդունում՝ հետագա աշխատանքները փոխհամաձայնությամբ իրականացնելու նպատակով: «Մենք ուզում ենք օգնել, որ այսքան տարի այսպիսի դժվար պայմաններում եք ապրել, նոր հեռանկարներ բացվեն ձեզ համար»,- ընդգծել է երկրի ղեկավարը՝ հավելելով, որ ծրագրի իրականացումը հնարավոր կլինի ժամանակի ընթացքում՝ փուլ առ փուլ:

Իհարկե, վատ պայմաններում բնակվող մարդիկ ուրախ կլինեն, եթե իրենց կենցաղային պայմանները բարելավվեն, բայց բոլորը հասկանում են, որ Կոնդի վերակառուցում ասելով այս իշխանությունը ոչնչացնելու է մեր պատմական անցյալի եւս մի նմուշ, մի թաղամաս, որը հին Երեւանի մասն է կազմում եւ կարող է զբոսաշրջային մեծ նշանակություն ունենալ:

Բացի այդ, Փաշինյանի իշխանությունը որեւէ խոստում այս տարիներին չի կատարել, այդ թվում՝ Երեւանի հետ կապված. ո՛չ մետրոյի Աջափնյակ կայարանն է կառուցված, չնայած տարիներ շարունակ խոստանում են, ո՛չ աղբի վերամշակման գործարան են կառուցել, ո՛չ ակադեմիական քաղաքը, ո՛չ Նորագավիթ թաղամասը, ո՛չ «Հին Երեւան» նախագիծը: Նույնիսկ Ավինյանի կառուցած ստորգետնյա անցումները փորձանք են դարձել մարդկանց գլխին՝ Մաշտոցի շուկայի դիմացի անցումը՝ անգամ կրկնանորոգումից հետո, լցվում է անձրեւաջրերով եւ անանցանելի դառնում՝ անձրեւի ժամանակ նավակ է հարկավոր, որ այդ անցումով անցնեն: Արդեն 30 տարի է՝ բոլոր իշխանությունները խոստանում են Սովետաշենի աղբավայրի հարցը լուծել, իսկ վերջին տարիներին այդ աղբավայրը շարունակ վառվում է, եւ երեւանցիները ստիպված են այրվող աղբի թունավոր ծուխը շնչել, եւ անգամ այս հարցերը չեն լուծվում:

Փաշինյանի իշխանությունը կարո՞ղ է Կոնդ թաղամասը բարեկարգել: Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ **Իզաբելլա Աբգարյանը** մեզ հետ զրույցում ասաց. «Ֆիրդուսի թաղամասի ավարտական տեսքը դեռեւս անգամ չկա, բայց ամենասկզբում հենց Ֆիրդուսից են սկսել, մարդկանց ստիպում էին վաճառել տները, իսկ մարդիկ դժգոհ էին փոխհատուցումներից եւ այլն: Ինչ վերաբերում է Կոնդին, ապա շատ լավ կլիներ, եթե կարողանային Կոնդն ավելի հրապուրիչ դարձնել, այն նաեւ տուրիստների համար գրավիչ կլիներ: Երեւանում այնքան անավարտ աշխատանքներ կան, այնքան մեծ ծրագրեր կան, որոնք սկսել են, սակայն ձախողել: Կոնդի պարագայում հարցը շատ ավելի բարդ է, գործ ունենք կոնկրետ մշակութային շերտի հետ, ինչի հետ պետք է աշխատեն կոնկրետ մասնագետներ, եւ շատ կարեւոր հանգամանք է, թե ովքեր են աշխատելու, ինչպես են աշխատելու, ինչ է արվելու եւ այլն»:

- Այսինքն՝ հերթական անգամ մարդկանց վտարելու են իրենց տներից, խոստումներ են տալիս, սակայն անհայտ է, թե այդ թաղամասն ինչ ճակատագիր կունենա:

- Երբ խոսվում է շինարարական մեծ աշխատանքների մասին, պետք է հասկանալ, որ խոսքը մեծ փողերի մասին է: Այնտեղ, որտեղ կան մեծ շինարարություններ, կան մեծ գումարներ, իսկ դա ենթադրում է, որ լինելու է վերահսկողության ուժեղ անհրաժեշտություն, որը շատ դժվար է մեզանում ստացվում, ավելի ճիշտ՝ ստացվում է, սակայն՝ հետին թվով: Նման մեծ պրոյեկտներն ազդում են տնտեսական ակտիվության վրա, կա «շինարարական փուչիկ» գաղափար, իշխանությունը դիմեց այդ հնարքին, եւ հենց նման պրոյեկտների հաշվին ուզում են տնտեսական ցուցանիշները բարելավել:

- Ինչո՞ւ մինչ օրս չեն լուծում մետրոյի Աջափնյակ կայարանի հարցը կամ աղբի գործարան չեն կառուցում:

- Դեռ Տարոն Մարգարյանի ժամանակներից հայտարարվում է աղբի վերամշակման գործարանների կառուցման մասին, սակայն մենք տեսնում ենք, որ սայլը չի շարժվում տեղից: Բացի մասնագիտական գիտելիքներից, պետք է նաեւ որոշակի հետաքրքրություններ լինեն, քանի որ աղբի մշակումն ունի ֆինանսական բաղադրիչ: Ավինյանը վերջերս հայտարարեց, որ այսուհետ չասենք աղբավայր, ասենք՝ աղբի գործարան, բայց ես այդքան լավատես չեմ ու չեմ հավատում, որ մոտակա ժամանակներս կտեսնենք այդ գործարանները:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՄԵՆԱԾԱՎԱԼՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ 2 ՓՈՔՐ ԿԱՄՈՒՐՋՆԵՐՆ ԵՆ

Մայրաքաղաք Երեւանում խցանումները լուրջ խնդիր են դարձել: Բայց տեղաշարժվելն անտանելի է դարձել ամիսներով ճանապարհների վերանորոգում իրականացնելու, մասնավորապես՝ Կիեւյան կամրջի փակվելու պատճառով: Մենք զրուցել ենք Երեւանի շինարարական վարչության պետի տեղակալ **Տիգրան Դարբինյանի** հետ:

- Օրեր առաջ հայտարարվեց, որ Կիեւյան կամրջի շինարարության պատճառով բավական երկար ժամկետով փակվում է կամուրջը: Ինչո՞ւ այդքան երկար: Չէ՞ որ մայրաքաղաքի երթեւեկությունն ուղղակի կաթվածահար է եղել այդ պատճառով:

- Ժամկետներն իրականում որոշվում են նախագծային փաստաթղթերով, այսինքն՝ նախագծողը երբ աշխատանքների ծավալներն է նախատեսում, դրանց ժամանակացույցն է հաշվարկում, թե ինքան ժամանակում պետք է կատարվեն նշված աշխատանքները: Նախագծով եւ, հետեւաբար, պայմանագրով նախատեսված ժամկետը 210 օր է, բայց սա վերաբերում է ընդհանուր աշխատանքներին: Բայց քանի որ ամառային սեզոն է, երթեւեկության մասով որոշակի թեթեւություն ունենք, այնպես է նախատեսված, որ հերթափոխներն ավելի երկար աշխատեն, որ մինչեւ օգոստոսի վերջը երթեւեկելի հատվածը բաց լինի: Իսկ մյուս հատվածներում՝ կամրջի տակի, հնարավոր է նաեւ հետիոտնի համար նախատեսված մայթերի հատվածում, բազրիքների վրա աշխատանքներն ավելի երկար իրականացվեն:

- Էրեբունի վարչական շրջանում է Արին Բերդի փողոցի եւ Արցախի փողոցի խաչմերուկը, Արին Բերդի փողոցի 5-րդ նրբանցքի խաչմերուկին միացող ճանապարհահատվածի շինարարության համար է սահմանվել գրեթե 6 ամիս ժամանակ: Այս դեպքում ի՞նչ խոչընդոտներ կան:

- Այստեղ ճանապարհը հիմնանորոգվում է՝ տակի շերտերով, կոմունիկացիաներով: Որոշակի բարդություններ կան՝ կոմունիկացիաների հետ կապված, այստեղ ստորգետնյա մալուխներ կան՝ մեծ քանակի եւ բարձր լարման, հեղեղատար համակարգ պետք է կառուցվի, կոյուղատար համակարգը պետք է փոխարինվի, ջրամատակարարման համակարգ պետք է փոխվի, լուսավորության համակարգ է կառուցվում, որի լարերը ստորգետնյա են անցնում: Պետք է փոխարինվի: Կան նաեւ գազատար խողովակներ, բայց ամենածավալուն աշխատանքն այստեղ առկա 2 փոքր կամուրջներն են, որոնք երթեւեկելիս նկատելի չեն, սակայն մեկը երկաթգծի վրայով է անցնում, իսկ մյուսը՝ ջրանցքի: Մեկը վերակառուցվում է, իսկ մյուսը՝ հիմնանորոգվում:

- Այս ճանապարհը ծանրաբեռնվա՞ծ ճանապարհ է համարվում, եւ երկար ժամանակով փակ լինելը որքանո՞վ է խնդրահարույց վարորդների համար:

- Բավականին ծանրաբեռնված է, այսպես թե այնպես՝ եթե ճանապարհ կա եւ այդ ճանապարհը փակվում է, որոշակի խնդիրներ առաջանում են: Այնտեղ հիմնականում գործարանային հատվածներ են, պահեստներ են, կա փոքր հատված, որը բնակելի է: Հիմնականում մեծ մեքենաների շարժ է, բայց շրջանցիկ ճանապարհներ նախատեսված են:

- Նախկինում եղե՞լ են դեպքեր, երբ վերանորոգման համար երկար ժամկետով ճանապարհներ են փակվել:

- Չեմ հիշում, եւ, հավանաբար, չի էլ եղել նման բան, քանի որ նման մասշտաբի աշխատանք չի արվել, որպեսզի այդքան երկար ժամանակով փակվեն:

- Որո՞նք են կապալառու ընկերությունները, ի՞նչ ընթացակարգով են ընտրվել, եւ որքա՞ն են պայմանագրերի արժեքները:

- Երկու դեպքում էլ կապալառու ընկերություններն ընտրվել են մրցույթով: Կիեւյան կամուրջը վերանորոգող կապալառու ընկերությունը «Պրետոր» ընկերությունն է՝ 456 մլն դրամ է պայմանագրային արժեքը: Իսկ Արին Բերդի ճանապարհի վերանորոգողը «Վասպուրական» ընկերությունն է, պայմանագրի արժեքը 938 մլն դրամ է: Պայմանագրերը կնքվել են Երեւանի քաղաքապետարանի եւ կապալառու ընկերությունների միջեւ:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ԻՆՉՆ Է ՓՈՂԻՑ ԲԱՐՁՐ ՈՒ ԿԱՐԵՎՈՐ

Թե որքանով են ամերիկյան իշխանությունները հուսալի գործընկեր խաղաղության հաստատման գործում, ինչպես են նրանք կատարում իրենց վրա վերցված պարտավորությունները, պարզ երեւում է ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ կնքված փոխըմբռնման հուշագրի իրացման ընթացքից: Հունիսի 21-ին ԱՄՆ-ն եւ Իրանը Պակիստանի եւ Կատարի միջնորդությամբ փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին, որի արդյունքը պետք է լիներ այս երկրների միջեւ հրադադարի ռեժիմի հաստատումը եւ 60-օրյա ժամկետում բանակցությունների միջոցով ավելի երկարատեւ, կայուն խաղաղության համաձայնագրի ստորագրումը: Անցած մեկ շաբաթում չի եղել մի օր, որ իրանական եւ ամերիկյան պաշտոնական աղբյուրները չտեղեկացնեն փոխադարձ հարվածների մասին: Ամերիկյան կողմը ռմբակոծում է իրանական ռազմական օբյեկտները, Իրանի բանակը՝ Քուվեյթում, Բահրեյնում գտնվող ամերիկյան ռազմաբազանները եւ Հորմուզի նեղուցում նավագնացության կանոնները խախտող նավերը:

Ամերիկյան կողմին խաղաղություն պետք չէ, եւ նրանք ցույց են տալիս, որ ստորագրված փաստաթղթերն իրենց համար որեւէ արժեք չունեն. իրենց դա պետք է Իրանին հնազանդեցնելու համար: Իսկ հնազանդեցումը պետք է տեղի ունենա փողի միջոցով՝ փող աշխատելու մոլուցքը պետք է կուրացնի մարդկանց բանականությունը եւ ոչնչացնի արժանապատվությունը: Ամերիկացիների զենքը, որի միջոցով հպատակեցնում են պետություններին եւ ազգերին, ոչ թե տանկերն են կամ ավիացիան, այլ փողը, ֆինանսական եկամտի եւ բարեկեցության խոստումը, որը պետք է կուրացնի մարդկանց՝ հետին պլան մղելով արժանապատվությունը եւ ինքնասիրությունը: Մեխանիզմը հետեւյալն է. ԱՄՆ-ն Իրանին խոստացել է, որ հետ կվերադարձնի նրանից խլված 25 միլիարդ դոլարը, դա այն գումարն է, որն Իրանը վաստակել է սեփական նավթը միջազգային շուկայում վաճառելու միջոցով, բայց ամերիկյան արգելքի պատճառով չի կարողանում օգտագործել, այդ գումարը մնացել է արեւմտյան բանկերում եւ չի հասնում իրական հասցեատիրոջը: Բայցի դա, ԱՄՆ-ն 300 միլիարդ է խոստացել՝ Իրանին պատճառված վնասը վերականգնելու, Իրանի տնտեսությունը զարգացնելու համար: Սա Իրանում եւ իրանական հասարակության մոտ պետք է առաջացնի առաջիկայում ավելի բարեկեցիկ ապրելու, իրենց տնտեսական եւ սոցիալական վիճակը բարելավելու տրամադրություն, եւ նրանք պետք է ապրեն այդ սպասումով ու երազանքով: Ամերիկյան տրամաբանությամբ, հանուն դրա նրանք պետք է պատրաստ լինեն զիջելու իրենց ազգային արժանապատվությունը. երբ ԱՄՆ-ն հարվածի իրենց տարածքին, ասեն՝ դե լավ, ոչինչ, եկեք չնկատելու տանք կամ համարժեք պատասխան չտանք, քանի որ դա կարող է հանգեցնել պայմանավորվածությունների չեղարկման, եւ մենք կզրկվենք թե՛ մեր 25 միլիարդից, թե՛ խոստացած 300 միլիարդից, կզրկվենք ավելի լավ ապրելու մեր երազանքից: Բայց իրական կյանքում տեսնում ենք, որ Իրանը համարժեք պատասխան է տալիս ամերիկյան հարվածներին՝ ցույց տալով, որ ոչ մի խոստումով կամ միլիարդով հնարավոր չէ գնել իրենց ազգային արժանապատվությունը: ԱՄՆ-ն ոչ թե խաղաղարար է, այլ՝ ստրկացնող, տնտեսական շահի կամ բարեկեցիկ կանքի խոստումն ընդունող է եւ բարեկեցիկ կյանք: Բայց Ռուսաստանը եւս մերժեց ամերիկյան ֆինանսական առաջարկը՝ տեսնելով, որ ամերիկացիների իրական նպատակը ոչ թե խաղաղությունն է, այլ իրենց պայքարի կամքը կոտրելը, ռուսական իշխանությունները հայտարարեցին, որ Անքորիջում ձեռք բերված պայմանավորվածություններն առոչինչ են:

Ինչո՞վ են կարեւոր այս երկու օրինակները. անցած տարվա օգոստոսի 8-ին Հայաստանը եւ Ադրբեջանն ԱՄՆ միջնորդությամբ մի հուշագիր ստորագրեցին, որի նպատակն իբր խաղաղության հաստատումն մենը ձկնորսական կարթի այն որդն է, որի միջոցով նրանք որսում են հիմար ձկներին:

Դոնալդ Թրամփի վարչակազմը նույնը փորձեց անել Ռուսաստանի հետ. երկու երկրների նախագահները հանդիպեցին Ալյասկայում՝ Անքորիջում, Թրամփը խոստացավ, որ ճնշում կգործադրի Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու վրա, կդադարեցնի պատերազմի ֆինանսավորումը, եւ կողմերը կհանգեն խաղաղության: Նորից նույն փողի խոստումը. Ռուսաստանից խլված 300 միլիարդ եվրոյով զարգացման հիմնադրամի ստեղծում, որը պետք է օգտագործվեր Ռուսաստանում տարբեր ծրագրերի իրականացման համար, համատեղ ծրագրերի իրականացում, պատժամիջոցների չեղարկում: Դրա նպատակը եւս Ռուսաստանում, ռուսական հասարակության մոտ մոտալուտ խաղաղության եւ տնտեսական բարգավաճման կեղծ սպասումների առաջացումն էր, որը պետք է կոտրեր կռվելու եւ պայքարելու ոգին, ի՞նչ իմաստ ունի կռվել, եթե շուտով խաղաղություն է եւ բարեկեցիկ կյանք: Բայց Ռուսաստանը եւս մերժեց ամերիկյան ֆինանսական առաջարկը՝ տեսնելով, որ ամերիկացիների իրական նպատակը ոչ թե խաղաղությունն է, այլ իրենց պայքարի կամքը կոտրելը, ռուսական իշխանությունները հայտարարեցին, որ Անքորիջում ձեռք բերված պայմանավորվածություններն առոչինչ են:

Ինչո՞վ են կարեւոր այս երկու օրինակները. անցած տարվա օգոստոսի 8-ին Հայաստանը եւ Ադրբեջանն ԱՄՆ միջնորդությամբ մի հուշագիր ստորագրեցին, որի նպատակն իբր խաղաղության հաստատումն է, ֆինանսական ներդրումները եւ տնտեսական զարգացումը, որի դիմաց Հայաստանն ԱՄՆ-ին զիջեց իր տարածքի նկատմամբ ինքնիշխանությունը: Հայ հասարակությունը դրա դեմ չըմբոստացավ, շատ քաղաքական ուժեր, այդ թվում՝ իրենց ընդդիմադիր համարողներ, նույնիսկ ողջունեցին դրա իրականացումը՝ որպես Հայաստանի զարգացման նախադրյալ: Բայց մի՞թե պարզ չէ, որ տնտեսական հարստացում եւ բարգավաճում չի լինում ստրկացման հաշվին, ստրուկները չեն կարող լավ ապրել, նրանց գործը տերերի օգտին աշխատելն է: Ռուսաստանի եւ Իրանի օրինակներն այլ բան էլ են ցույց տալիս, ամերիկյան կողմի խոստացած խաղաղության եւ տնտեսական զարգացման նախագծերը դատարկ խոստումներ են, դրանք կյանքի կոչվելու եւ իրականանալու շատ քիչ հնարավորություն ունեն: Այն հասարակությունը եւ պետությունը, որը վաճառքի է հանում իր արժանապատվությունը, չի կարող լավ ապրել, չկա լավ կյանք առանց արժանապատվության:

«Ալբանիան չի վաճառվում». այսպիսի կարգախոսներով էին փողոց դուրս եկել այդ երկրի մայրաքաղաք Տիրանայի բնակիչները, ի պատասխան Ալբանիային պատկանող մի կղզում ԱՄՆ նախագահի փեսա Զարեդ Քուշների կողմից ծավափնյա հանգստի գոտի ստեղծելու առաջարկին: Ալբանացիները չոգեւորվեցին բազմամիլիարդանոց ներդրումների եւ բարձր վարձատրվող աշխատատեղերի խոստումներով, որովհետեւ հասուն հասարակությունները հասկանում են, որ փողից բարձր եւ կարեւոր արժեքներ կան:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՂԻՄ

Օգտվելով այն հանգամանքից, որ Սահմանադրական դատարանում ընթանում են հունիսի 7-ի ընտրությունների արդյունքների վիճարկման նիստերը, որոշեցի կրկին անդրադառնալ հունիսի 7-ի լույս 8-ի գիշերվա իրադարձություններին, այն է՝ ՀՀ վարչապետի աթոռից կառչած անձի (ենթակաների լուռ մասնակցությամբ) մամուլի ասուլիսին: Այնուամենայնիվ, ի՞նչը ստիպեց իշխող խմբակին՝ քվեարկության ավարտից ընդամենը 5-6 ժամ անց՝ մեռելային դեմքերով հանդես գալ: Եթե որոշել էր հաղթանակի մասին «ավետել» ՀՀ քաղաքացիներին, ապա դա պետք է կատարվեր ուրախ դեմքով: Եթե մեռելային էին դեմքերը, ապա պետք է ենթադրել, որ գործերը շատ վատ էին: Ու, ըստ այդմ, ի՞նչ հիմքով էր հայտարարվում հաղթանակի մասին:

Եվ քանի որ լրագրողների դիմաց կանգնել էր համարյա ողջ ՔՊ-ական քվազիէլիտան՝ Նիկոլով հանդերձ, ապա ենթադրվում է, որ դրան նախորդել է ծանր քննարկում: Մեռելային այդ «շնորհանդեսին» ՔՊ-ականների ներկայանալը ենթադրել է տալիս, որ ծանր քննարկման արդյունքում բարձրաձայնվելիք հայտարարությունն այդ անձանց կողմից դիտարկվել է որպես խմբակային հանցագործության ակտ: Դա նման էր այն տեսարանին, երբ ծեծ կերած հանցախումբն առկա իրավիճակին ոչ համապատասխան հայտարարում է հակառակորդին հաղթելու մասին:

Ոմանք ասում են, թե դա արվեց այն նպատակով, որպեսզի համապատասխան հրահանգ հղվի ԿԸՀ-ի նախագահ Հովակիմյանին: Բայց այն, ոչ պակաս արդյունավետությամբ, կարող էր արվել նաեւ հեռախոսով, ուրեմն դա չէր նպատակը: Որպես բազմափորձ դիտորդ՝ 2003-ից մինչեւ 2019 թվականը, կարող եմ ենթադրել, որ կեսգիշերային առաջին հաջող հաշվետվություններից հետո պատկերը փոխվել է 180 աստիճանով՝ յուրաքանչյուր նոր տեղամասից ստացվող տեղեկություններին զուգահեռ: Ու դա նկատելով, նախ ԿԸՀ-ին հրահանգել են կանգնեցնել տեղեկատվության տրամադրումը: Երկրորդ. որոշել են իրականացնել պետական հեղաշրջում՝ անբավարար ձայների առկայության պայմաններում հայտարարել հաղթանակի մասին: Իհարկե, անհեթեթ է հնչում գործող իշխանության կողմից իշխանությունը պահելու գործընթացը բնորոշել որպես պետական հեղաշրջում: Բայց անհեթեթ կառավարման պարագայում տեղի ունեցող անհեթեթությունները՝ ինչ էլ դրանք լինեն, բնական են եւ նորմալ:

Քվեարկությունից հետո վերահաշվարկ է կատարվել 2005-ից 637 ընտրատեղամասում կամ 1/3-ում: Ընդ որում, թիվ 6 ԸԸՀ-ն սեփական նախաձեռնությամբ է իրականացրել իր բոլոր 52 ընտրատեղամասերի վերահաշվարկը: Դա առնվազն զարմանալի է՝ ԿԸՀ-ի ենթակայությամբ գործող ԸԸՀ-ն ինչո՞ւ պետք է նման նախաձեռնություն ցուցաբերեր՝ ստուգեր իր արածը: Հատկապես որ վերահաշվարկի արդյունքում չնչին փոփոխություններ եղան ընդհանուր պատկերում: Բայց թիվ 6 ԸԸՀ-ն միակը չէր. նույն մոտեցումն են ցուցաբերել թիվ 1, 2, 4, 5 եւ 8 ԸԸՀ-ները, եւ նույն պատկերն է գրանցվել նաեւ այնտեղ: Այսինքն, 637-ից 268 ընտրատեղամասում ամեն ինչ եղել է օրինական: Կարծում եմ, դա կատարվել է, որպեսզի ցույց տրվի, թե որքան մաքուր է աշխատել ընտրական ողջ համակարգը: Այնինչ, ինչպես պարզվել է ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից առաջարկված՝ այլ ԸՀՀ-ների ընտրատեղամասերի վերահաշվարկից, պատկերը վերին աստիճանի տխուր էր:

Իսկ ո՞րն է քվեարկության ավարտից հետո ընդդիմադիրների ձերբակալությունները շարունակելու իմաստը: Նախորդի նման, այս գործընթացը եւս հակատրամաբանական է թվում: Չնայած հնարավոր է այսպիսի հիմնավորմամբ՝ պայմանավորված է հարեւան երկրի բռնապետի ազդեցությամբ: Նա հենց այդպես վարվեց՝ փորձելով (եւ հաջողության հասնելով) մինչեւ վերջ խեղճացնել երբեմնի «դուխով» Նիկոլին: Եվ նույնն էլ ցանկանում է անել ինքը: Որպեսզի արդեն լրիվ խեղճացված հանրությամբ անցկացնի նոր ընտրություններ՝ եթե նման բան որոշի ՍԴ-ն՝ պաշտպանելով ընդդիմության բողոքը: Դա կարող է նաեւ պահանջել ԵՄ-ն՝ դիտարկելով իրավիճակը եւ փորձելով խոչընդոտել ավելի ահավոր պայթյունը: Հիշենք, որ 2003-ի կեղծված նախագահական ընտրություններից հետո ծայր առած բողոքների արդյունքում այն ժամանակվա ՍԴ-ն որոշեց մեկ տարի անց անցկացնել վստահության հանրաքվե: Ինչը կյանքի չկոչվեց:



Ներկայացվածը, իհարկե, վարկած է: Եվ իրականությունը կպարզվի իշխանափոխությունից հետո: Ինչը, կարծում եմ, շատ չի ուշանա, որովհետեւ, նախ, այսպիսի աննորմալ ընտրություններ անցկացվել են միայն նախորդ դարի 90-ականներին: Իսկ նորմալը տեսած մարդիկ չեն ցանկանա վերադառնալ նախկին աննորմալին: Հատկապես որ աստիճանաբար հաղթահարվում են 44-օրյա պատերազմի խայտառակ պարտությամբ պայմանավորված հոգեբանական շոկն ու ապատիան:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ

ՎՍՏԱՀ ԵՄ՝ ԻՍՐԱՅԵԼԸ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՀԱՅՏՆԵԼ Է ԲԱԿՎԻՆ ԻՐ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Արա ԱԼՈՅԱՆ

«Հրապարակի» զրուցակիցն «Իսրայելահայեր» թերթի գլխավոր խմբագիր **Արտյոմ Չերնամորյանն** է:

- Իսրայելի արտգործնախարար Գիդեոն Սաարը, ինչպես խոստացել էր, կառավարության վերջին նիստերից մեկում ներկայացրեց Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչող բանաձեւի նախագիծ, որը միաձայն ընդունվեց: Հայ հանրությունը մեծ ոգեւորությամբ արձագանքեց փաստին՝ գիտակցելով, սակայն, որ սա նաեւ թուրք-իսրայելական հակասությունների արգասիք է: Ըստ Ձեզ, ո՞րն է գլխավոր շարժառիթը:

- Գլխավոր շարժառիթը թուրք-հրեական թեժացող հարաբերություններն են, որի պատճառով էլ կայացվեց Իսրայելի կառավարության այս միանձնյա որոշումը՝ Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ, եւ, ի դեպ, ոչ ավել, ոչ պակաս՝ վարչապետ Նեթանյահուի գլխավորությամբ: Վերջին շրջանում թուրքերը, հանձին Էրդողանի, հաճախակիացրել են իրենց քննադատությունները, մեղադրանքները Իսրայելի կառավարության հասցեին, մասնավորապես՝ Գազայում, այսպես կոչված, ցեղասպանություն իրականացնելու հետ կապված, ուստի Թել Ավիվի «համբերության բաժակը լցվել է», հարաբերություններն էլ նվազագույնի են հասցվել Թուրքիայի հետ՝ հոկտեմբերի 7-ի հայտնի դեպքերից հետո, որն էլ շարժառիթ եղավ նման որոշման:

- Կարծիք կա, որ Հոլոքոստ ապրած հրեա ժողովուրդն ու հրեական պետությունը մի փոքր ուշացրել է այս հարցի արծարծումն այն իմաստով, որ իբրեւ հայության հետ բախտակից ազգ՝ կարող էր ավելի շուտ բարձրացնել այն: Այդուհանդերձ, վերջին շրջանում Իսրայելում գիտական, փորձագիտական հանրությունը, կարծեք, փոխել է Հայոց ցեղասպանության հետ կապված դիրքորոշումը, եւ դա, փաստորեն, հասել է պետական շրջանակներ: Ի՞նչն է բերել այս հանգրվանին:

- Այո՛, Իսրայելը, որպես պետություն, եւ ինչքան մտավորականներ կան, որ բախտ եմ ունեցել՝ իրենց հետ զրուցելու, միշտ ասել են ու ասում են՝ այո, Իսրայելը Հայոց ցեղասպանությունը պետք է ճանաչեր 1948 թվականին, այսինքն՝ իր պետության միջազգային ճանաչումից հետո, որպես ցեղասպանությունից մազապուրծ եղած ազգ, որն իր երկիրն է կառուցում: Բայց դա տեղի չունեցավ քաղաքական տարբեր պատճառներով, որովհետեւ շահական Իրանն ու քեմալական Թուրքիան, փաստորեն, միակ պետություններն էին, որոնք Իսրայելի վրա հարձակվելու նկրտումներ չունեին: Սրանով պայմանավորված՝ մինչեւ 2000-ականների վերջը, մինչեւ Էրդողանը եկավ իշխանության, խաղաքարտերը փոխվեցին, ինչն էլ անխուսափելի հնարավորություն տվեց Իսրայելին՝ քննարկել Հայոց ցեղասպանության հարցը: Սա, իմ կարծիքով, «ապտակ» է Թուրքիային: Խնդիրը փաստացի ճանաչումն է, որ պետությունն առ այսօր չի արել. շուտով Իսրայելում խորհրդարանական ընտրություններ են, ինչը նշանակում է, որ ֆիզիկապես եւ տեսականորեն ժամանակ չկա ՝ Հայոց ցեղասպանության հարցը Քնեսեթ տանելու համար:

- Ուրախալի են նաեւ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի արձագանքն ու դիրքորոշումն այս հարցում. նա հայտարարել է Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի նախագծին աջակցելու մասին: Սա մեծացնու՞մ է կառավարության կողմից բանաձեւի հաստատումն ու ապա՝ Քնեսեթում վերջնական վավերացումը:

- Իհարկե, լավ է, որ Իսրայելի վարչապետը նման հայտարարություն է անում: Նա էլի է արտահայտվել, թե իբր ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, բայց փաստացի նման բան չի եղել, իր կուսակցությունն առաջինն է, որ տասնյակ տարիներ Քնեսեթում դեմ է քվեարկել Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւին: Այս անգամ կառավարությունը ճանաչեց, բայց հաջորդ կառավարությունը կարող է ասել՝ ես չեմ ճանաչում: Գլխավորը Քնեսեթի կողմից Հայոց ցեղասպանության վերջնական ու պաշտոնական ճանաչումն է, որը շուտով արձակուրդ է մեկնում, քննարկման հնարավորություն չկա, իսկ առաջիկա ընտրություններում մեծ հարց է՝ Նեթանյահուն մնալո՞ւ է վարչապետ, թե՝ ոչ, կամ՝ արդյո՞ք ընդդիմություն կդառնա, թե՝ չէ: Կամ՝ կոալիցիա կլինի՞, եւ ինչ զարգացումներ. հարցեր են, որոնց պատասխաններն այս պահին չկան:

- Ակնհայտ է, որ ինչ-որ շրջանակներ, հատկապես՝ թուրք-ադրբեջանական, կխոչընդոտեն Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչմանը: Այդ երկրներն արդեն բացասաբար են արձագանքել: Ուշագրավն Ադրբեջանի դիրքավորումն է Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ, Բաքվի մանեւրելու տարածքը նեղանո՞ւմ է:

- Այո, Ադրբեջանն արդեն դատապարտող հայտարարությամբ է հանդես եկել, առաջարկել՝ վերանայել այդ որոշումը, բայց վստահ եմ, որ Իսրայելն իր դիվանագիտական խողովակներով արդեն հայտնել է Բաքվին իր որոշման մասին, եւ դա չի փոխվելու, միանշանակ: Ադրբեջանական եւ թուրքական լոբբին բավականին հզոր են Իսրայելում, հատկապես վերջին տարիներին՝ ադրբեջանականը: Տնտեսական, ռազմական եւ ռազմավարական հարաբերություններն այս պարագայում, բնականաբար, հաշվի են առնվել: Իսրայելն իր մեսիջները պարզ ու հստակ ուղարկել է Բաքվին, իսկ Ադրբեջանի ԱԳՆ-ի հայտարարությունն ընդամենը ներքին լսարանի համար է: Բայց երբ Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման հարցը բերվի Քնեսեթ, այդ ժամանակ կտեսնենք ադրբեջանաթուրքական լոբբիի ռեալ աշխատանքը: Իսկ հիմա սա ուղղակի ճանաչում է, որը, ըստ էության, դրական քայլ է հայության համար, բայց պաշտոնական ճանաչում չէ, կարելի է համարել որպես կառավարության պաշտոնական հայտարարություն:

Համատարած գաղտնալսումներ

Այն, որ Հայաստանում դատահրավական համակարգը դարձել է գործադիր իշխանության ձեռքի խամաճիկը եւ ապօրինի որոշումներ է կայացնում, անմեղ մարդկանց կալանավորում, նորություն չէ: Հատկապես հաճախ խախտվում են մարդու անձնական կյանքի գաղտնիությունը, անձնական տվյալների պահպանության մասին օրենքը: Իշխանությունը մարդկանց գաղտնալսելու հարցում ռեկորդներ է սահմանել. ում եւ ինչպես ցանկանում՝ լսում են, հետո այդ ձայնագրությունները հայտնվում են իրենց պատկանող լրատվականներում, հրապարակայնացվում, անգամ եթե այդ զրույցները խիստ անձնական են: Մեկնարկը տրվեց նախկին ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանի անձնական նամակների հրապարակմամբ: Նիկոլ Փաշինյանն անգամ իր թիմակիցներին չի խնայում եւ բազմիցս տեղեկություններ է հրապարակել մարդկանց անձնական կյանքի մասին, որոնք ստացել է ի պաշտոնե: Ընտրությունների փուլում գաղտնալսումներն ուղղակի համատարած դարձան՝ տեղեկություն ունենք, որ գյուղերից մեկի խանութում են գաղտնալսող սարք տեղադրել: Փաստաբան **Հայկ Ալումյանը** մեզ ասաց, որ համատարած գաղտնալսումներն ապօրինի են եւ չունեն որեւէ արդարացում: Փաստաբան **Վարազդատ Հարությունյանն** էլ նկատեց. «Առհասարակ, պրակտիկայում վարույթ իրականացնող քննիչներն են որոշում՝ ում գաղտնալսել եւ ինչ պատճառներով, իհարկե, երեւույթը մտահոգիչ է: Մտահոգիչ է հատկապես այն, որ համատարած են գաղտնալսում»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ ՉՊԵՏՔ Է ՂԵԿԱՎԱՐԵՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանը հայտարարել է, որ հաջորդ ընտրություններում մտադրություն չունի առաջադրվելու ՀՖՖ նախագահի պաշտոնում: Մենք զրուցել ենք Առաջին հայկական ճակատի՝ FAF-ի երկրպագուների միավորման հիմնադիր անդամ **Սերգեյ Ջանջոյանի** հետ:

- Արմեն Մելիքբեկյանը հայտարարել է, որ չի առաջադրվելու ՀՖՖ նախագահի հաջորդ ընտրություններում: FAF-ը բազմիցս Մելիքբեկյանի հրաժարականն է պահանջել, ինչպե՞ս եք վերաբերվում այս հայտարարությանը եւ այդ պաշտոնում ո՞ւմ եք տեսնում:

- Մենք չենք հավատում, որ ինքը չի պատրաստվում կրկին առաջադրվել կամ վերարտադրվել ուրիշ մեկի միջոցով: Մենք պետք է ուշադիր լինենք, որ չփորձի առաջադրվել կամ իր թիմից մեկ ուրիշի դեմքով վերարտադրվել: Ինչ վերաբերում է հարցին, թե ում ենք ուզում, ինչպես նախկինում հայտարարել ենք, հիմա էլ հայտարարում եմ, որ չունենք թեկնածու:

- Արդեն մամուլում անուններ են շրջանառվում ՀՖՖ նախագահի թեկնածուի, օրինակ՝ Սիսակ Գաբրիելյանի, Մխիթար Հայրապետյանի անունները: Քաղաքականության մեջ գտնվող մարդկանց կողմից ֆուտբոլը կառավարելը որքանո՞վ է նպատակահարմար:

- Իմ կարծիքով, պետք է քաղաքական գործիչ չլինի: Դա թե՛ տվյալ անձին է վնաս տալու, թե՛ ինքն է իշխանությունից կախումների մեջ լինելու ու չի կարողանալու ներդաշնակ աշխատել: Առհասարակ, մի անգամ եղել է, որ ՀՖՖ նախագահը քաղաքական գործիչ է եղել՝ Արթուր Վանեցյանը, տեսանք, թե վերջում ինչ եղավ: Իհարկե, ով համապատասխանում է, կարող է առաջադրվել, բայց ես կցանկանամ, որ քաղաքականության հետ կապ ունեցող մարդիկ չմտնեն ֆուտբոլի մեջ:

- Իսկ եթե Մելիքբեկյանը կրկին առաջադրվի, FAF-ը կրկի՞ն բողոքի ակցիաներ կկազմակերպի:

- Կարծում եմ՝ այո, քանի որ մենք բազմիցս հայտարարել ենք, որ թույլ չենք տալու վերարտադրություն՝ նաեւ ցանկացած անձի ընտրվելը, որն ասոցացվում է նրա թիմի հետ:

- Մամուլում շրջանառվում է նաեւ Արմեն Մելիքբեկյանի խորհրդական Ռուբեն Նազարեթյանի անունը, նա ճ՞ւս ասոցացվում է թիմի հետ, եւ նրա թեկնածությանն ի՞լ եք դեմ:

- Միանշանակ՝ դեմ ենք, մարդ, որն ամբողջ գործունեությունը Մելիքբեկյանի կիսել է, մարդ, որը ֆուտբոլի հետ ընդհանրապես կապ չունի, չպետք է ղեկավարի ՀՖՖ-ն: Ոչ մի դեպքում չի կարելի գնալ արկածախնդրության եւ նրան առաջադրել, մենք միանշանակ դեմ ենք լինելու:

«Գինեսների տունը». արժե դիտել

Պատմական սերիալները, բացի այն, որ ներկայացնում են անցյալում տեղի ունեցածը, նաեւ դարձել են յուրատեսակ «լաբորատորիաներ», որտեղ բարձրացվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ իշխանություն, կապիտալ, ընտանեկան հարաբերություններ, հանրային փոփոխություններ: Նման նախագիծ է «Գինեսների տունը» սերիալը: Ռեժիսորը Սթիվեն Նայթն է: Ժանրային առումով այն պատմական դրամա է: Գործողությունները ծավալվում են 19-րդ դարի Դուբլինում, որտեղ Բենջամին Լի Գինեսի մահվանից հետո ժառանգները պայքարում են միմյանց հետ՝ Իռլանդիայի խոշորագույն գարեջրագործական ընկերությանը տիրանալու համար: Առաջին հայացքից սերիալը գարեջրագործների ընտանիքին նվիրված պատմական գործ է: Սակայն առաջին իսկ սերիաներից զգացվում է, որ ասելիքը հաջողության գնի, սերունդների հակամարտության, բիզնեսի նկատմամբ բարոյական պատասխանատվության եւ ինդուստրիալ հեղափոխության շրջանում եվրոպական հասարակության փոփոխման մասին է:

Սթիվեն Նայթի այս նախագծում ֆինանսական շահերը ձուլվում են անձնական հավակնությունների հետ, ընտանեկան հարաբերություններն ընթանում են մշտական դիմակայության տեսքով: Ժառանգներից յուրաքանչյուրը, որ պայքարում է ընկերությանը տիրանալու համար, նրա ապագան տեսնում է յուրովի: Մասնագետները նշում են, որ սերիալի հեղինակները չեն վերստեղծել Գինեսների ընտանիքի վավերական պատմությունը, այլ ներկայացրել են, թե ինչպիսին էր Իռլանդիան 1800-ականներին: Գինեսների ընկերությունն այս դեպքում ոչ միայն հաջողակ ընտանեկան բիզնես էր, այլեւ տնտեսական փոփոխությունների խորհրդանիշ: Արդյունաբերականացումը փոխում է հասարակությունը, ստեղծում հանրային նոր խավեր, միաժամանակ՝ ավելի ուժգնացնում սոցիալական անհավասարությունը եւ տարբերությունները՝ տարբեր աստիճանների վրա կանգնածների միջեւ: Սերիալում նաեւ մի նուրբ ասելիք կա. ցանկացած խոշոր բիզնեսի հետեւում բարդ մարդկային որոշումներ են, քաղաքական կոմպրոմիսներն ու անձնական ողբերգությունները: Սերիալում կերպարների հերոսացում, որպես այդպիսին, չկա: Գործնականում կերպարներից յուրաքանչյուրը եւ դրական, եւ բացասական էմոցիաներ է առաջացնում: Ամեն բան բազմաշերտ է ու բալանսավորում պահանջող, որ մի պահ թվում է, թե խոսքը ոչ թե սերիալի մասին է, այլ մեր օրերում ծավալվող իրական զարգացումների: Սա, ի վերջո, այն նախագծերից է, որը դիտելու համար անհրաժեշտ են ուշադրություն եւ համբերատարություն, ու այն, անխոս, կհետաքրքրի ինտելեկտուալ կինոնախագծերի բոլոր սիրահարներին:

ԵՐԲ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՐՎԵԼ ԱՌԱՋԻՆ ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ ԳՐՔԵՐԸ

ԽՈՀԱՆՈՑ

Այսօր գրեթե բոլոր հարթակներում ամենաշատ հեռարձակվողները խոհարարական հաղորդումներն են, երբ հաղորդման հեղինակը եթերում ուտելիք է պատրաստում, ներկայացնում տարբեր կերակրատեսակների բաղադրատոմսեր: Համացանցում էլ ակտիվորեն զարգանում է «ֆուդ բլոգինը»՝ ամբողջ աշխարհում: Իսկ երբ ու ինչպես են կազմվել եւ հրատարակվել առաջին խոհարարական գրքերը:

Խոհարարական գրքերի պատմությունը մոտ 4 հազարամյակ է հաշվվում: Այն արտացոլում է գաստրոնոմիայի զարգացումը, նաեւ՝ ներկայացնում երկրից երկիր, ժողովրդից ժողովուրդ՝ մշակութային, պատմական, բնակլիմայական ու այլ առանձնահատկությունները: Գիտնականները կարծում են, որ առաջին խոհարարական բաղադրատոմսերը, որոնք հասել են մեզ, գրանցվել են Հին Միջագետքում: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են կավե սեպագիր պնակներ, որոնք բովանդակել են կերակրի բաղադրատոմսեր եւ թվագրվել են մ.թ.ա. 18-րդ դարով: Դրանք եղել են մսային կերակուրներ, ապուրներ եւ սոուսներ: Այդ տեքստերը, իհարկե, ժամանակակից ընկալմամբ՝ խոհարարական գրքեր չես համարի, սակայն հենց դրանք են եղել խոհարարական արվեստի առաջին գրավոր վկայությունները: Հետագայում արդեն խոհարարական բաղադրատոմսեր հանդիպում են անտիկ հեղինակների մոտ: Առավել հայտնի հուշարձանը հին հռոմեական De re coquinaria՝ «Խոհարարական արվեստի մասին» գործն է, որը կապված է հին հռոմեացի հայտնի համտեսող Մարկով Գավիոս Ապացիուսի հետ: Թեեւ գիրքը մեզ հասել է ավելի ուշ արված խմբագրություններով, սակայն այն ահռելի ազդեցություն է ունեցել եվրոպական գաստրոնոմիական ավանդույթի վրա:

Միջնադարում խոհարարական արվեստի վրա մեծ ազդեցություն է գործել Արաբական Արեւելքը: 9-13-րդ դարերում արդեն Բաղդադում կազմվել են ծավալուն խոհարարական ժողովածուներ, որտեղ մանրամասն ներկայացվել են կերակրատեսակների բաղադրությունները, սեղանի հարդարման կանոնները, կերակրի պատրաստման ու համեմման եղանակներն ու նրբությունները, նույնիսկ՝ սեղան նստելու էթիկան: Արաբական աշխարհի շնորհիվ է, որ խոհարարական շատ գիտելիքներ հասել են Եվրոպա: Եվրոպայում 15-րդ դարում կատարված գրատպության գյուտից հետո բավական արագ սկսել են տարածվել խոհարարական բաղադրատոմսերը: Առաջին տպագիր խոհարարական գրքերից մեկը Եվրոպայում համարվում է իտալական De honesta voluptate et valetudine: «Արժանավայել վայելքի եւ առողջության մասին» աշխատությունը, որը հրատարակվել է 15-րդ դարում: Շուտով համանման գրքեր հրատարակվել են Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում եւ Իսպանիայում: Աստիճանաբար խոհարարական գրքերը լայն տարածում են ստացել ու դադարել լինել միայն վերնախավի «մենաշնորհը»: Դարձել են քաղաքային բնակչությանը հասանելի, եւ բաղադրատոմսերը նաեւ սկսել են «պարզեցվել»՝ համապատասխանելով առօրյա կենցաղին ու հնարավորություններին:

Ռուսաստանում երկար ժամանակ խոհարարական բաղադրատոմսերը փոխանցվել են բանավոր: Միայն 18-րդ դարի երկրորդ կեսին հայտնվել են առաջին մասնագիտացված տպագիր խոհարարական գրքերը: Ամենահայտնի հեղինակներից է եղել Վասիլի Լյովշինը, որի աշխատությունները ծանոթացրել են ոչ միայն եվրոպական, այլ նաեւ՝ ռուսական ազգային խոհանոցի հետ: 19-րդ դարում խոհարարական գրքերի հրատարակությունները շեշտակիորեն ավելացել են: Դրանք դարձել են տներում ընտանեկան գրադարանների պարտադիր մասը: Հատկապես հետաքրքիր է խորհրդային շրջանում՝ 1939 թվականին, «Համեղ ու առողջ կերակուրների մասին» գրքի հրատարակությունը: Տասնամյակներ շարունակ այն ԽՍՀՄ միլիոնավոր ընտանիքների համար հանդիսանում էր գլխավոր խոհարարական ուղեցույց-ձեռնարկը:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՌԵՊՐԵՍԻԱՆԵՐ Է ԱՆՈՒՄ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՀԱՅՏՆՎԵԼ Է ԲԱՐԴ ՎԻՃԱԿՈՒՄ

«Դրապարակի» զրուցակիցը Հայ առաքելական եկեղեցու բարձրաստիճան սպասավորներից է, որը ծառայություն է իրականացնում սփյուռքում: Նա չցանկացավ ներկայանալ, խնդրեց գաղտնի պահել իր անունը՝ ներկայացնելով իր տեսակետը Հայաստանում եւ ՀԱԵ շուրջ կատարվող իրադարձությունների մասին:

- Սրբազան, Հայաստանում ընթացող հետընտրական զարգացումներին, անշուշտ, հետեւում եք: Ինչպե՞ս են դրանք երեւում հեռվից:

- Որոշ չափով հետեւում եմ: Այսքան հեռավորությունից,իմ ընկալմամբ, պատկերը հետեւյալն է. Հայաստանում տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ, երբ որեւէ մեկը չկարողացավ հավաքել 50 տոկոս եւ ավելի քվե, որպեսզի կարողանար ձեւավորվեր մեծամասնության իշխանություն: Ես չգիտեմ՝ Հայաստանի օրենսդրությամբ դա ինչպես է կոչվում: Գործող իշխանությունները՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, բավականին բարդ ու անհարմար վիճակում են հայտնվել: Ես չգիտեմ՝ Հայաստանի լսարանը որքան է հետեւում արտաքին իրադարձություններին կամ «դրսից եկող ազդակներին», սակայն ինձ համար, օրինակ, պարզ է, որ Հայաստանը հայտնվել է ռեգիոնալ վերադասավորման հանգրվանային դիրքերից մեկում: Նիկոլ Փաշինյանը համաձայնել է սկսել պրոցեսներ, որոնք չեն կարող մնալ կիսատ: Դրանք պրոցեսներ են, որոնք պետք է շարունակվեն: Դա Փաշինյանի կամքից անկախ բան է, նույնիսկ կհամարձակվեմ ասել՝ Հայաստանի բնակչության կամքից անկախ բան է: Պատկերավոր ասած՝ դրանք պրոցեսներ են, որոնց դիրիժորները «մեծ խաղացողներն» են: Մի մոռացեք, որ աշխարհը հիմա վերափոխման փուլում է, ու, ինչպես Թուրքիո խորհրդարանի նախագահ Նուման Քուրթուլմուշն ասաց օրերս, հին աշխարհակարգն այլեւս չկա, նոր աշխարհակարգ է ձեւավորվում: Եվ, ուրեմն, Հայաստանն այդ նոր ձեւավորվող աշխարհակարգի տեղամասերից մեկում հայտնվել է նկատելի դիրքում եւ պետք է կատարի այն, ինչը համաձայնել է սկսել Նիկոլ Փաշինյանը: Եվ հիմա ստացվել է այնպես, որ ձեր ռեգիոնում հիմնական խաղացողների բարեհաճությունը ստացած լինելով, չի կարողացել ընտրություններում ապահովել 50 տոկոս եւ ավելի քվե ու ձեւավորել, ասենք այսպես՝ «հուսալի մեծամասնություն»: Հասկանալի է, որ «մեծ խաղացողները» նրա հետ հարցուպատասխան են ունենալու՝ իրենց օրակարգի առումով, իրենց «ճանապարհային քարտեզի» իրականացման առումով: Ու նման իրավիճակում Փաշինյանը պետք է սկսի ռեպրեսիաներ: Քավ լիցի, ես չեմ արդարացնում նրա գործողությունները, սակայն ուզում եմ, որ գործողությունների ետնապլանում նրան դրդիչ կամ մղիչ ֆակտորները տեսնեք: Ռեպրեսիաներով ու հնարավոր վախի մթնոլորտով նա փորձելու է իրեն ոչ կողմնակից ուժերի կամ հանրային շերտի կարողունակությունը չեզոքացնել: Ռուսներն ասում են՝ «գայլակները ձգել»: Մոտավորապես նույն բանն է անում: Չեզոքացնելով ընդդիմության կարողունակությունը՝ նա ակամա հասարակությանը մղում է քաղաքական խոր ապատիայի ու անտարբերության գիրկը: Իսկ այդ պայմաններում նրա համար շատ հեշտ կլինի իրականացնել այն «ճանապարհային քարտեզը», որը պետք է իրականացնի:

Իրականում, նա շատ վատ բան է անում: Ասեմ ավելին՝ սեփական քաղաքական կործանումն է ազդարարում, որովհետեւ ցանկացած իշխանություն, որը չունի իրեն քննադատող ընդդիմություն, վերածվում է բռնակալության, կարճ ժամանակում լճանում է ու սկսում ինքնաքայքայվել, նեխել: Եթե Փաշինյանն այս ճանապարհով է գնում, ուրեմն ինքն իր ու իր թիմի քաղաքական դատապարտման թուղթն է «ստորագրում»: Դա նաեւ ծանր հարված է հենց Հայաստան պետության համար:

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԸՆՏՐԵՑԻՆ ԵՎ ՈՎՔԵՐ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՍԴ-Ի «ԱՐԴԱՐ» ՎՃՌԻՆ

Մեր երկիրը հանդարտահոս գետ է, որի հունը դիտավորությամբ փոխում են վայ կառավարիչները, իսկ հունը փոխած ջրերը ոչնչացնում են ծաղկած դաշտերը: Կենսաթոշակ բարձրացնելը, 65 եւ ավելի տարիքի անձանց անվճար բուժօգնությունը՝ ընտրություններից առաջ, նախընտրական կաշառք էր: Իշխանությունը, որ վերարտադրվելու մոլեգին ցանկություն ուներ, հաշվի չառավ դրա հետեւանքները: Հայաստանում 660 հազար թոշակառու կա, մոտ 900 հազար աշխատող: Անգամ ծերացող Եվրոպայում աշխատող-թոշակառու հարաբերությունը 3/1 է: Հայաստանյան հարաբերակցությունն իրերի աղետալի դրության մասին է ավետում: ՀՀ-ում աշխատողների զգալի մասը պետական ապարատում է, սպասարկման, առեւտրի, վարչական եւ վերահսկողական ոլորտներում: Նյութական արտադրանք չի տալիս: Արդյունաբերություն չկա, գյուղատնտեսությունը կաթվածահար է: Մի բուռ ծիրան Եվրոպա նվեր տանելը արտահանել չէ: «Դրսից տուրիստներ կգան, մեր միրգը կուտեն, ծաղկից հոտ կքաշեն՝ գյուղմթերքների արտահանման հարցը կլուծենք» մտքերը ծաղր են տնտեսագիտության նկատմամբ:

Մինչ ընտրությունները երկրում մոտ 400-450 հազար մարդ արդյունք էր ստեղծում: Այդ թվից հանեք գյուղոլորտում զբաղվածներին, ովքեր զրկվեցին ՌԴ գյուղմթերք արտահանելուց: Հենց այս սահմանափակ արտադրողներն են պահում ողջ համակարգը՝ պետական ապարատը, ապահովում սոցվճարները, սպասարկման եւ վարչական ոլորտները: ՌԴ-ի հետ մեր առեւտրային հունը փոխած՝ եվրոպական հուն ընտրածը չի մտահոգվել սրա մասին: Էսպես կարելի՞ է կառավարել երկիրը: Դա այնքան է հեռու կառավարումից, որքան Նիագարայի ջրվեժը՝ Հայաստանից: Այս կառուցվածքով ու կառավարմամբ սոցիալական քաղաքականություն հնարավոր չի լինի իրականացնել: Սա մաթեմատիկա է, ոչ թե քաղաքականություն:

ՔՊ ընտրողներ, շուտով թոշակները կսկսեն ուշանալ իշխանությունների ստեղծած «շիլաշփոթի» հետեւանքով: Սոցհամակարգը կաթվածահար կլինի, որովհետեւ հիմքը խախուտ է: Իսկ դուք սպասում եք, թե երբ կլսեք «երանելի» լուրը՝ ՍԴ-ն վճռեց, որ ընտրություններն անցել են օրենքի տառին համապատասխան: Կցնծաք եւ կվայելեք ձեր հաղթանակի պտուղները: Իսկ հետո թոշակները կտրվեն անկանոն, վճարի չափն ինչ-որ պատճառաբանությամբ կկրճատվի, եւ քանի որ առողջապահական համակարգը փլուզվում է՝ արտոնությունները կվերացվեն «անհրաժեշտաբար»: Կարծում եք՝ իշխանությունը վախենալո՞ւ է ձեզնից: Նրանց վախը եք, թե երբ կլսեք «երանելի» լուրը՝ ՍԴ-ն վճռեց, որ ընտրություններն անցել են օրենքի տառին համապատասխան: Կցնծաք եւ կվայելեք ձեր հաղթանակի պտուղները: Իսկ հետո թոշակները կտրվեն անկանոն, վճարի չափն ինչ-որ պատճառաբանությամբ կկրճատվի, եւ քանի որ առողջապահական համակարգը փլուզվում է՝ արտոնությունները կվերացվեն «անհրաժեշտաբար»: Կարծում եք՝ իշխանությունը վախենալո՞ւ է ձեզնից: Նրանց վախը իշխանությունից, բյուջեի նկատմամբ վերահսկողությունից զրկվելուց է: Ոմանք վախենում են երկրի կորստից, նրանք՝ աթոռների: Նրանք այնքան են հեռացել աղքատությունից, որ կորցրել են աղքատին տեսնելու ունակությունը: Առաջնորդ Նիկոլն ասել է՝ պետական բյուջեն մեր ընտանիքի բյուջեն է: Ընտանիքը պարգեւավճար է ստանում, շարասյունով շրջում, քարոզարշավ անում պետական միջոցներով, իսկ ընտանիքի «խորթ» անդամներին բացատրում են՝ փող չկա: ՌԴ-ի հետ հարաբերությունները քանդեցին, Եվրոպան դուռը չբացեց: Ռուսաստանը բենզին չտա՝ Ադրբեջանից կբերենք, ցորեն չտա՝ Ադրբեջանը ողջ լինի: Ուտելիք չլինի՝ «քոլի» երկիր ենք՝ «քոլ կարածենք»: Իսկ «երբ հարուստը թալանում է, դա կոչվում է բիզնես, երբ աղքատներն ընդդիմանում են, կոչվում է բռնություն» (Մարկ Տվեն):

ԱՄՆ Կապիտոլիումում «Հայաստանից ադրբեջանցիների էթնիկ զտմանը» նվիրված համաժողով էր: Նիկոլը՝ լուռուհամ, նա միայն մեր ժողովրդին է պատասխանում: Ասել է՝ ով կխոսի ադրբեջանցիների վերադարձի մասին, մեր թշնամին է: Ըստ նրա՝ երկրին ուղղված սպառնալիքներ չկան, վտանգը միայն խորհրդարանական ընդդիմությունն ու հայ ժողովուրդն են: Նիկոլ ընտրող, գիտե՞ս՝ հասարակական վայրերում արդեն ջնջում են մեր հերոսների նկարները: Ասում են՝ իզուր եք կռվել ու հերոսացել: Ազատամարտիկներ, երաշխիք ունե՞ք, որ պատերազմի մասնակցի վկայականները վաղը «բերդի պուտյովկա» չեն դառնալու: Նիկոլն է ասել. «Բոլորին ջնջելու եմ հասցեական»: Այնպես որ, Նիկոլի եւ Ադրբեջանի զավթողական ծրագիրը պետք է կանխել հիմա: Եթե դա չանենք քաղաքական դաշտում, հարկադրված ենք լինելու գործել ռազմի դաշտում: Թուրքերը միջազգային մակարդակով հիմքեր են ստեղծում՝ հարձակվելու համար, իսկ ՔՊ-ն մեզ հիմարացնում է խաղաղության բարբաջանքով: Եվ ՍԴ-ին չի նայում որպես արդարադատության տաճարի, այլ՝ ինչպես հեղեղից փախչող մարդը կնայի վերջին կամրջին. միայն թե անցնի, հետո կամուրջը թող ջուրը տանի: Նրանց մտածողությունը սեղմվել է մի նախադասության մեջ՝ «էս փորձանքից պրծնենք, ալլահը գիտի, թե հետո ինչ կլինի»: Նիկոլի «աղանդին» հարող, բայց մտածելու ընդունակությունը դեռ պահպանած մարդիկ հասկանան, թե որքան ծանր գին են վճարելու ՔՊ-ի իշխանության մնալու դիմաց:

ՍԴ հարգելի անդամներ, ԱԺ ընտրությունների արդյունքների բողոքարկմանն ուշադիր հետեւում է ազգը: Առաջնորդվեք ՀՀ օրենքներով, դուք հաշվետու եւ պատասխանատու եք թե՛ ազգին, թե՛ իրավաբանական մասնագիտական հանրույթին: Ձեր որոշումից է կախված Հայաստանի իրավակարգի եւ ժողովրդավարության ճակատագիրը...

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 30.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ԱՊԱԳԱՆ ԷԼ ՊԱՐԶ ՉԷ

Կարծում եք ճի՞շտ է, որ Վահագն Հովակիմյանին այս պահին քննում է ոչ թե հակակոռուպցիոն մարմինը, այլ Սահմանադրական դատարանը: Ո՞վ չգիտի, որ ՍԴ-ն մեր երկրում տեղի ունեցող հանցագործությունների մասին միշտ վերջինն է տեղեկանում: ՍԴ դատավորները նրա համար հո չե՞ն, որ հանցագործի ձեռքը բռնեն: Նրանք ծանր մարդիկ են՝ ուչաստկովիի աշխատանք կատարելու համար: Ուստի ճիշտ կլիներ, որ Վահագն Հովակիմյանը նախ անցներ հակակոռուպցիոնի միջով, դատախազությունով, քննչականով, հարկայինով, վերջապես՝ Նիկոլ Փաշինյանի անձնական օգտագործման մամլիչների տակով եւ նոր միայն բարեհաճեր բարձր դատարան:

ՍԴ-ի ձեռքը, կարծես, ֆուտբոլի գնդակ է ընկել, ոնց ուզում՝ տշում են: Ընդդիմության պաշտպանները գոնե մի քիչ խղճմտանք դրսեւորեն: Այնպիսի հարցեր են տալիս, որ նույնիսկ Հովակիմյանն է անհարմար զգում պատասխանել: Դուք չգիտե՞ք, որ այդ մարդը լիարժեք իրավաբան չէ, մաթեմատիկոս չէ, կիբեռնետիկ չէ, ֆիզիկոս չէ, քիմիկոս չէ... Դրել՝ տոկոսախեղդ եք անում, որ ի՞նչ: Թե բա՝ պարոն Հովակիմյան, դուք ե՞րբ եք իմացել, որ խնդրահարույց տեղամասերը ժամանակին չեն փակվել: Սա հա՞մց է, որ տալիս եք պարոն Հովակիմյանին... Նա էլ, թե՝ 8-ին պակաս էր... Մութուլուս էր: Լավ չեմ հիշում: Հարցնում են՝ մամուլից ու ֆեյսբուքի՞ց եք իմացել: Չէ... Հեռազգացողությո՞ւնն է Ձեզ հուշել... Չէ... Լավ, բա ո՞նց եք իմացել, որ ընտրատեղամասերը մինչեւ գիշերվա հազարը բաց են եղել: Ես ձեր հարցին արդեն պատասխանեցի: Լավ, այս որակի խոսակցությո՞ւն պիտի քննի ՍԴ-ն:

Բայց որ բանը բանից անցել է, եւ Հովակիմյանը կանգնել է ՍԴ-ի առաջ, ինձ այլեւս ոչինչ չի մնում անելու, քան «կասկածյալին» (հարգելով նրա անմեղության կանխավարկածը) մի քանի խորհուրդ տալ, թե ինչպես պահի իրեն դատարանում: Սա նաեւ դատարանի շահերից է բխում, որովհետեւ տեսնում եմ, թե մեր բարձր դատավորներն ինչպես են նեղվում Հովակիմյանի ցաքուցրիվ պատասխաններից: Բա շոգը... Մարդիկ արդեն շորտիկ են հագնում, իսկ մեր բարձր դատավորները, պատմուճանների մեջ փաթաթված, Վահագն Հովակիմյան են «դատում»:

Եվ, ուրեմն, ի՞նչ կարող է անել Վ. Հովակիմյանը, որ հա՛մ բարձր դատավորներին ազատի այս ծանր վիճակից, հա՛մ էլ մենք վերջնականապես համոզվենք, որ հունիսի 7-ի ընտրությունները կեղծված են: Պարոն Հովակիմյան, կարող եք համարել, որ ես այս պահին միջնորդում եմ ԿԸՀ-ին, որ թույլ տա ընտրությունների մասնակից ՔՊ-ի պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանին ներգրավել այս գործով որպես վկա եւ հրավիրել դատարան: Պարոն Հովակիմյան, սա հաստատ Ձեր շահերից է բխում, որովհետեւ այս պահին Դուք օրենքի ճիրաններում եք հայտնվել ոչ այնքան Ձեր պաշտոնի բերումով, որքան Փաշինյանի ընտրակեղծարարության եւ պետական ռեսուրսի չարաշահման: Ուրեմն թող նա գա եւ անձամբ պատասխան տա, մանավանդ, որ քեզնից ավելի ճարպիկ է հարցուպատասխանների մեջ: Քեզ ինչ հարց տալիս են, քարկապ ես ընկնում: Այսպես հա՛մ քեզ կկործանես, հա՛մ Նիկոլին:

Պարոն Հովակիմյան, մյուս կողմից վստահ եմ, որ Դուք կարդացել եք Նիկոլ Փաշինյանի «Ճշմարտության հակառակ կողմը» աշխատությունը (Փաշինյան Ն., Երկերի ժողովածու, հատ. 2, Իջեւան, 1919): Այդ աշխատության մեջ Նիկոլ Փաշինյանը խոսում է այն մարտավարական հնարքների մասին, որոնք պետք է կիրառել ստի մեջ բռնվելու դեպքերում: Դրանք շատ են, բայց ամենակարեւորը 2-ն են՝ «չոր ատկազ» (օրինակ՝ ես այդպիսի բան չեմ ասել, չեմ հիշում, որ այդպիսի բան արած լինեմ) եւ «ինքզինքը գժի տեղ դնել»: ՍԴ-ն էլ, փառք Աստծո, այն տեղն է, որտեղ կարելի է կիրառել Նիկոլ Փաշինյանի բոլոր մեթոդները՝ դժվար կացությունից դուրս գալու համար: Ճղճղացեք, ինչո՞ւ չեք ճղճղում... Կկզացնեմ, կոչնչացնեմ, կփռեմ ասֆալտին, կլցնեմ ԱԱԾ-ի պադվալը... Փռեմ ասֆալտին, ծեփեմ պատերին... թալանչիներ, քրեաօլիգարխներ... Պարոն Հովակիմյան, հենց տեսնում եք՝ դատավորներն ու փաստաբանները Ձեզ նեղն են դնում, կոչով դիմեք Փաշինյանի «ընտրազանգվածին», որ գան, շրջափակեն ՍԴ-ն, դատավորներին քաշքշեն, լուսամուտներից դուրս քաշեն: Մի խոսքով, ինքնապաշտպանությունից դրդված՝ Դուք ազատ եք՝ անել ամեն ինչ: Բա հո «չուժոյ պախմել» էշ նահատակ չե՞ք դառնալու...

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am